

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### ՕՊԱՍԱ ՊԻՏԻ ՅԱՐԳԷՐ ԻՐ ԽՈՍՏՈՒՄԸ ԹԵ ՈՉ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Այսօր մօտ ամիսէ մ'աւելի, մեր հայ համայնքի մէջ մի անհատի, որ մօտէն կամ հեռուէն կը հետաքրքրուի մեր ազգային պահանջատիրութեան հետ աղերսուած հարցերով՝ իր մտահոգութիւններու կիզակետը դարձուցած է ԱՄՆ-ի կողմէ Հայոց Ցեղասպանութեան 60-ամեակի քանդակի ընդունման պարագան, թող որ ԱՄՆ-ի ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնախումբը, Հինգշաբթի, Մարտ 4, 2010- ին քանակաւ հայոց ղեկավարները դրուած Ցեղասպանութեան 60-ամեակը պահանջող թիւ 252 քանակաւ վաւերացումը, 22-ի ղեկավարներով:

Հեռաձայնային զանգերով մեզի դուրսը հարցադրումներ կը կատարուին մեր կայքէջէն պէտքով, թէ նախագահ Օպամա, որ տարի մը առաջ իր նախագահութեան թեկնածութեան ընտրաշրջանին, բազմաթիւ առիթներով յայտարարած էր, որ ինքի ղեկավարները 1915-ի հայոց ղեկավարներու ցեղասպանութիւնը, թէ՛ երբ ընտրուէր, պիտի աշխատէր, որ ԱՄՆ, որպէս համամարդկային արժեքներու պաշտպան պետութիւն, իր կարգին, պաշտօնապէս ընդունէր զայն: Արդարեւ, ԱՄՆի ներկայացուցչական ժողովը պիտի վաւերացնէ՞ր համաձայն տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնախումբին ընդունած քանակաւ, թէ՛ ոչ:

Օպամա այդ իր ընտրապայքարի թէ՛ օրերուն ԳԷՆ Խաչիկեանին հասցէագրած նամակին մէջ, կը գրէր...«Մենք այս պատմական նշանակութիւնը (Ցեղասպանութիւնը, Ա.Գ.) պէտք է նախագահ. Պուշի կառավարութիւնը արդարացում չունի այս նշանակութիւնը չնանջալու համար. ես պիտի շարունակեմ նիզ վատնել որպէսզի կառավարութիւնը փոխէ իր տեսակետը»: Մեծ էր խանդավառութիւնը մեր համայնքէն ներս, իսկ շատ խորը՝ թուրքի վրդովմունքը:

Իր ընտրութեան անմիջապէս ետք սակայն, Օպամայի դիրքորոշումը կը կրեք պատճառաբանել փոփոխութիւն: Ցեղասպանութեան տարեկիցը կը մօտենար: Տրուած խոստումին ժամկետը հասնելու վրայ էր: Արդէն Ապրիլ ամսուան մէջ էին: Օպամա պիտի յարգէր թէ՛ ոչ՝ իր խոստումը-այսինքն՝ ան պիտի արտասանէ՞ր «Ցեղասպանութիւն» բառը, թէ՛ ոչ: Նախագահ Օպամա, բոլորիս ծանօթ հայ-թուրքական մտածածից յարաբերութիւններու քննարկա-

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ԿՈՂՄԵ ԶԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻ ՎԱԿԵՐԱՑՈՒՄԵՆ ԵՏՔ ԹՈՒՐԲԻԱ ՄՇԱԿԱԾ Է ԶԱԿԱՔԱՅԼԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ

Միացեալ Նահանգներու Գոնկերէսի ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութիւններու Յանձնախումբը Հինգշաբթի, Մարտ 4-ին վաւերացուց Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող թիւ 252 քանակաւ նախագիծը:

Հակառակ ամերիկեան վարչակազմի յորդորներուն, Բանաձեւի կողմ քուէարկեցին 23 գոնկրէսակաճներ, որոնց շարքին՝ Յանձնաժողովի նախագահ Հաուըրտա Պըրընը, դէմ՝ 22 գոնկրէսակաճներ:

Թիւ 252 քանակաւ նախագիծը կոչ կ'ընէ Ամերիկայի նախագահին՝ «ապահովելու, որպէսզի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը արտացոլէ պատշաճ ըմբռնում Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ Միացեալ Նահանգներու արձանագրութիւններուն մէջ փաստուած՝ մարդու իրաւունքներու, ցեղային զտումներու եւ ցեղասպանութեան հարցերու կապակցութեամբ»: Բանաձեւը նաեւ կոչ կ'ընէ Նախագահին՝ ապրիլ քանչորսեան իր տարեկան խօսքին մէջ ճիշդ կերպով բնորոշելու մէկուկէս միլիոն հայերու կանխամտածուած բնաջնջումը՝ որպէս ցեղասպանութիւն: Ներկայացուցիչներու Տան ար-



Թուրք ցուցարարներ կը բողոքեն Ցեղասպանութեան քանակաւ վաւերացման դէմ

տաքին հարցերու յանձնաժողովը նման բովանդակութեամբ բանաձեւեր ընդունած էր 2000, 2005 եւ 2007 թուականներուն: Սակայն այդ բանաձեւերը երբեք ալ չհասան Գոնկրէսի լիազումար նիստին: Նախքան Յանձնաժողովի կողմէ թիւ 225 քանակաւ քուէարկութեան դրուելը, Պետական քար-

տուղար Հիլըրի Բլինթըն պատասխանելով լրագրողներու հարցին, իր եւ նախագահ Օպամայի Հայոց Ցեղասպանութեան քանակաւ հարցով դիրքորոշման փոփոխութեան, կարծիք չայտնեց որ ներկայիս

## ՆԻԿՈՒԱ ՍԱՐԿՈՋԻՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԶԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

Չորեքշաբթի, Մարտ 10-ին էլիզեյի Պալատէն ներս տեղի ունեցաւ Սերժ Սարգսեանի հանդիպումը Ֆրանսայի նախագահ Նիկոլա Սարկոզիի հետ: Հանդիպումէն ետք, նախապէս յայտարարուած մամուլի ասուլիսը տեղի չունեցաւ, սակայն Ֆրանսայի նախագահի մամուլի ծառայութեան փոխանցած տեղեկութիւններուն համաձայն երկու նախագահներու խօսակցութիւնը ընթացած է երկկողմանի յարաբերութիւններու եւ տարածաշրջանային հարցերու շուրջ: Կողմերը շեշտած են որ, աշխատանք պէտք է կատարուի երկու երկիրներու միջեւ տնտեսական համագործակցութիւնը խորացնելու ուղղութեամբ:

Հայաստանի տնտեսութեան մէջ կատարած ներդրումներու ծաւալով Ֆրանսան երկրորդ պետութիւնն է, սակայն, ինչպէս ըսած է Նիկոլա Սարկոզի՝ «Ֆրանսա պէտք է ըլլայ Հայաստանի կողքին»:

Ինչ կը վերաբերի Լեւոնային Ղարաբաղի հարցին, Ֆրանսայի նախագահը արտայայտուած է հակամարտութեան լուծման հիմնական

## ԵՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՅԸ ԽԻՍՏ ՔՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԿԵՆԹԱՐԿԵ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԶԱՄԱԿԱՐԳԸ

ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական Հաստատութիւններու եւ Մարդու Իրաւունքներու Գրասենեակը (ԺՀՄԻԳ) երկուշաբթի, Մարտ 8-ին հրապարակած զեկոյցին մէջ կը յայտնէ որ, 2008 թուականի Մարտին Երեւանի մէջ տեղի ունեցած յետընտրական բռնութիւններուն առթիւ տեղի ունեցած դատավարութիւններու ընթացքին բացայայտ դարձան Հայաստանի արդարադատութեան համակարգի թերութիւնները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը 2008 թուականի Ապրիլին մինչեւ 2009 թուականի Յունիս ամիսը հսկողութիւն կատարած է Հայաստանի դատարաններէն ներս, հետեւելով տարբեր մեղադրանքներով դատապարտուած ընդդիմութեան ներկայացուցիչներու դատավարութիւններու ընթացքին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի մասնագէտները 16 ամսուայ ընթացքում ներկայ եղած են 93 դատավարութիւններու:

ԵԱՀԿ-ի պաշտօնական կայքէջին վրայ տեղադրուած զեկոյցը, յատուկ ուշադրութիւն կը դարձնէ մինչ դատական գործընթացներու՝ նախաքննութեան ընթացքին տեղի ունեցած խախտումներու վրայ: Զեկոյցը կը յայտնէ որ,

խախտուած է անձի ազատութեան իրաւունքը: Մարտի իրադարձութիւններէն յետոյ կը կախմաւորուէին անխտիր բոլոր կասկածեալները, խախտելով անմեղութեան կանխավարկածը:

Դիտորդներուն համաձայն, շարք մը պարագաներու դատաւորները իրենք է որ մեկնաբանութիւններ կը կատարէին՝ ամբաստանեալներու մեղքի վերաբերեալ, երբ դեռ չէր աւարտած քննութիւնը եւ դեռ չկար օրինական ուժի մէջ մտած դատավճիռ: Երբեմն, ըսուած է զեկոյցին մէջ, դատաւորները իրենք էին, ամբաստանեալներու վրայ ճշմարիտ գործադրողները, որպէսզի անոնք ընդունին իրենց մեղքը:

Դատարաններէն ներս չէ պահպանուած մրցակցութեան եւ կողմերու հաւասարութեան սկզբունքը: Խոշտանգումներու եւ ճնշումներու ենթարկուած են ականատես վկանները, իսկ ցուցմունքներ ձեռք ձգուած են ոչ օրինական միջոցներով:

Իրենց բոլոր նկատառումներն ու գնահատականները, քննութեան մասնակցող դիտորդները հիմնա-

**ԱԶԳԱՅԻՆ**

**ՕՐՈՒՄՆ ԸԱՐՑՐՈՒՆ ԵՅՑ**

**ԹԻՒ 252 ԲԱՆԱԶԵԻՒ ՎԱԿԵՐԱՑՄԱՆ ՇՈՒՌՁ**

**Գ. ԽՈՏԱՆՆԱՆ**

Վերջին տասնամեակին չորրորդ անգամ ըլլալով Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովը վաւերացուց Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը հաստատող բանաձեւ մը:

Թիւ 252 բանաձեւի վաւերացումը ու անոր նախորդող ու յաջորդող իրադարձութիւնները, ինչպէս նաեւ քննարկումներու ընթացքին Գոնկրէսի անդամներու ունեցած ելոյթները խորհրդածուլթեան բաւական առիթ կու տան մեզի:

Առաջին հայեացքով անշուշտ որ Բանաձեւի ընդունումը մեծ յաջողութիւն էր հայութեան դէմ գործուած պատմական անարդարութեան ճանաչման ուղղութեամբ, մանաւանդ որ ան կոչ կ'ընէ Միացեալ Նահանգներու նախագահին, որպէսզի ի տարեկան խօսքին մէջ ճիշդ ձեւով բնութագրէ 1915 թուականին Օսմանեան կայսրութեան կողմէ հայութեան դէմ գործադրուած զանգուածային տեղահանութիւնն ու եղեռնը՝ օգտագործելով «Յեղասպանութիւն» բառը: Սակայն, քուէարկութեան արդիւնքը՝ 23 կողմ եւ 22 դէմ եւ մէկ ձեռնպահ, կու գայ նախանշան հանդիսանալու, որ Բանաձեւը այս անգամ եւս պիտի չկրնայ մոտաւ գործել Ներկայացուցիչներու Տան լիազուցար նիստի օրակարգէն ներս, ուր պէտք է կատարուի վերջնական հաստատումը: Անցեալին երեք առիթներով, նոյն Յանձնաժողովին ներս Բանաձեւերը աւելի հանգիստ մեծամասնութեամբ ընդունուելով հանդերձ, չարժանացան վերջնական բուխարկութեան: Նախագահներ Պիլ Քլինթըն եւ ճորճ Պուշ Էրին իրենց կարծիքն ու յաջողեցան կասեցնել Բանաձեւերու վաւերացումը: Տիրող կարծիքը այն է որ, նոյնը կը պատրաստուի ընել Օպամայի վարչակազմը, որ արդէն իսկ Պետական Քարտուղար Հիլըրի Գլինթընի բերնով եկաւ յայտարարելու թէ, ներկայիս «պայմանները փոխուած են» եւ վարչակազմը դէմ է Բանաձեւի վաւերացման, քանի որ նման քայլ մը կրնայ վնասել Հայ-թրքական հաշտեցման գործընթացին:

Հոս պէտք է նկատել որ, Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովին ներս Բանաձեւի շուրջ տեղի ունեցած քննարկումներու նախօրեակին, Ամերիկեան վարչակազմի ուղարկած նշանները բաւական անորոշ էին: Տիկ. Քլինթըն Յանձնաժողովի առջեւ իր տուած մէկ վկայութեան ընթացքին, Հայաստան-թուրքիա յարաբերութիւններու մասին խօսելով ոչ մէկ առարկութիւն կատարեց Յեղասպանութեան բանաձեւի մասին՝ հակառակ իրեն տրուած առիթին: Այս եւ նաեւ Բանաձեւի բաւական անակնկալ մոտաւ Յանձնաժողովի օրակարգ, ենթադրել կու տայ, թէ վարչակազմը համամիտ էր այս հարցի արծարծման, սակայն իր հսկողութեան տակ պահելով Բանաձեւի վերջնական ձեւափոխումը, որպէսզի ան չանցնի զծուած սահմանը: Քուէարկութեան արդիւնքի այսքան մօտ ըլլալը անգամ մտածել կու տայ, որ կարգ մը գոնկրէսա-

կաններ կողմ կամ դէմ կը քուէարկէին վարչակազմի հետ համախորհուրդ:

Կասկած չկայ եւ բացայայտ իրողութիւն է, որ Ամերիկա-թուրքիա յարաբերութիւնները չունին իրենց նախկին ջերմութիւնը: Միացեալ Նահանգները բազմաթիւ այլ հարցերու շարքին դժգոհ է Հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացումի գործընթացին մէջ թուրքիոյ վարած ձգձգումի քաղաքականութենէն: Ամերիկա հայտաւ աչքով չի դիտէր նաեւ թուրքիա-իրան յարաբերութիւններուն մէջ նկատուող մերձեցումը: Կան նաեւ կասկածներ, որ թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Էրտողանի իսլամական կառավարութեան վարած հակաիսրայէլեան քաղաքականութիւնը եւս կրնայ իր դերը ունեցած ըլլալ Բանաձեւի հրապարակ գալուն մէջ: Միացեալ Նահանգներու եւ նաեւ իսրայէլի կողմէ թուրքիոյ ուղղուած առաջին ազդարարութիւն մըն էր այս, եւ ըստ երեւոյթին անոնք առաջիմ պիտի բաւարարուին այսքանով:

Գալով Յանձնաժողովին ներս արտասանուած ելոյթներուն, նկատելի էր որ, դէմ եղողները իրենց առարկութիւնը կը կառուցէին ոչ միայն թուրք-Ամերիկեան յարաբերութիւններուն չվնասելու այլ նաեւ, Հայ-թրքական Արձանագրութիւններու վաւերացումը չվտանգելու հարցերուն վրայ:

Այս բոլորով հանդերձ, պէտք է թերագնահատել հայկական կազմակերպութիւններու տարած տքնաջան աշխատանքը՝ Ամերիկեան Գոնկրէսէն ներս Հայկական Յեղասպանութեան ճանաչումը ապահովելու ուղղութեամբ: Չի խանգարէր, որ այլոց եւ մեր շահերը այս պարագային պահ մը կրնան նոյնացած ըլլալ, սակայն պէտք է գոյգ ըլլալ որ Յեղասպանութեան հարցը չվերծուի քաղաքական խաղաքարտի՝ թուրքիոյ հետ ինչ-ինչ հաշիւներ մաքրելու համար:

Հայաստանի իշխանութիւնները որքան ալ փորձեն համոզել, որ Արձանագրութիւնները չեն կրնար վնասել Յեղասպանութեան միջազգային ճանաչման, սակայն անցեալ շաբթուայ իրադարձութիւնները անգամ մը եւս եկան ցոյց տալու, որ այդ Արձանագրութիւնները որպէս պատրուակ պիտի չարձանակուին օգտագործուիլ եւ թուրքիոյ կողմէ եւ այլոց կողմէ՝ պայքարելու համար հետագայ բոլոր նման բանաձեւերուն դէմ:

Ինչ կը վերաբերի թրքական հակազդեցութեան, այդ բոլորը սպասելի էր եւ ոչ մէկ անակնկալ կար այդտեղ: Թուրքիա ներկայիս կը բոլորէ բաւական տաքնապալի ժամանակաշրջան մը եւ կառավարութիւնը պաշարուած կը մնայ բազմաթիւ կողմերէ: Իսլամական կը դիմագրաւեն իրենց ամենաբարդ օրերը եւ կը փորձեն խիստ կեցուածք որդեգրելով հրապարակը չձգել ազգայնականներուն:

Վերջապէս, ինչ որ ալ ըլլան պարագաները, թիւ 252 բանաձեւի վաւերացումը միջազգային առումով արժանացաւ լայն արձագանգի ու այսպիսով, 95-ամեակի նախօրեակին Հայ ժողովուրդը յաջողութիւն մը եւս արձանագրեց Յեղասպանութեան ճանաչման գծով:

**ՈՒՐԱԽԱՆԱՆՔ ԵՒ ՏԻՐԵՆՔ՝ ԶԱՓԱՒՈՐ**

ԱՄՆ Կոնգրէսի ներկայացուցիչները պալատի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւը արտացոլում է թուրքամերիկեան եւ թուրք-իսրայէլական յարաբերութիւնների ներկայիս վիճակը: Անմիջական կապ հայերի, Հայաստանի, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան հետ այդ բանաձեւը չունի, ինչպէս եւ չունէր նախորդ 3 անգամ, երբ յանձնաժողովը նոյն բանն արեց: Իսկ համամարդկային արժէքների հետ, որոնք վկայակոչում է իր շնորհակալական նամակում մեր արտգործնախարարը, այդ քուէարկութիւնն ընդհանրապէս առնչութիւն չունի: Ո՞ւր էր, թէ որեւէ պետութեան (առաւել եւս՝ գերտէրութեան) որեւէ իշխանութիւն առաջնորդուէր համամարդկային արժէքներով: Գուցէ այդ արժէքներն է փնտրուում նոյն Միացեալ Նահանգները:

Իրաբուն կամ Աֆղանստանում: Կամ թերեւս դրանց հիման վրայ՝ Ռուսաստանը «նուաճել» Հարաւային Օսեթիան եւ Աբխազիան: Եւ ընդհանրապէս՝ թէ՛ գերտէրութիւններն առաջնորդուէին համամարդկային արժէքներով, ապա 1915 թուականին թուրքական կառավարութիւնը չէր կարողանայ ծրագրել եւ իրականացնել հայերի ցեղասպանութիւնը, եւ հիմա էլ դրա ճանաչել-չճանաչելու խնդիրը չէր առաջանայ:

Ասածս ամենեւին չի նշանակում, թէ պէտք է ուրախանալ, որ գոնէ այս՝ առաջին էտապում Կոնգրէսի յանձնաժողովն արդար որոշում է կայացրել: Պարզապէս այդ ուրախութիւնը պէտք է շատ չափաւոր լինի, որովհետեւ տիկին Քլինթոնը արդեն իսկ հրահանգ է տուել, որպէսզի ինչ-որ մէկ չարձագանք չարձագանքի չհասնի: Եւ քանի որ ԱՄՆ-ում օրէնսդիր եւ գործադիր

իշխանութիւններն այս պահին տարանջատուած են մօտաւորապէս այնչափ, որչափ Հայաստանում, կարելի է գրեթէ 100%-ով կանխատեսել, որ ինչ-որ մէկ փուլերին չի հասնի: Ճիշդ այնպէս, ինչպէս եղաւ այն ժամանակ, երբ ԱՄՆ նախագահի պաշտօնն էր զբաղեցնում ներկայիս պետքարտուղարի ամուսինը:

Ինչպէս եւ սպասուում էր, որպէս Յեղասպանութիւնը չճանաչելու պատրուակ բերում են անցեալ տարի ստորագրուած հայ-թուրքական արձանագրութիւնները եւ մասնաւորապէս պատմաբանների ենթադրանքներով իբր, երկու երկրները պայմանաւորուում են, եկէք չխանգարենք: Սակայն այդ պատճառաբանութեանը շատ լուրջ վերաբերուելը եւ դրա հետեւանքով բուն արձանագրութիւնների վրայ յարձակուելը բարեխիղճ մտնեցում չի լինի: Եւս մէկ անգամ յիշեցնենք, որ ԱՄՆ Կոնգրէսում այս գործընթացը արդէն 3 անգամ տապալուել է, եւ դարձեալ ամերիկեան դեկավարութիւնը ինչ-որ «մահանայ էր բռնում», երբ ոչ մի արձանագրութեան մասին որեւէ խօսք չկար: Միացեալ Նահանգները կը ճանաչի Յեղասպանութիւնը, եթէ նրան պէտք լինի որեւէ հարցով «պատժել» կամ «խեղճացնել» թուրքիային եւ ոչ թէ այն պատճառով, որ կոնգրէսականների կամ նախագահի վարչակազմի մէջ կ'արթնանան «համամարդկային արժէքները»:

Այնպէս որ, Կոնգրէսում ճանաչման գործընթացի հերթական տապալումից յետոյ պէտք կը լինի, իհարկէ, տիրել: Բայց՝ դարձեալ չափաւոր:

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**  
«ԱՌԱԻՕՏ»

**ԱԼԻԵԻ 12-ԱՄԵԱՅ ՈՐԴԻՆ 44 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ԿԱԼՈՒԱԾ ՈՒՆԻ ՏՈՒՊԱՅԻ ՄԵՁ**

Ամերիկեան հեղինակաւոր The Washington Post թերթը յօդուած մը տպագրած է, որ կապուած է Ալիեւներու ընտանիքի ստուերային գործունէութեան հետ:

Ըստ յօդուածի, Հէյտար Ալիեւ անունով ատրպէյճանցի 12-ամեայ դպրոցականը անցեալ տարի Տոկայոյի մէջ ձեռք ձգած է 44 միլիոն տոլար ընդհանուր արժողութեամբ անշարժ գոյք՝ ծովափնեայ 9 առանձնատուններու տեսքով: Երբեք անոր հետեւ չի եղել, որ այդ գումարը համարժէք է միջին ատրպէյճանցիի 10 հազար տարուայ եկամուտին:

Ամերիկեան թերթը յաջողած է ճշդել, որ այս Հէյտար Ալիեւի անունը, ազգանունը, ծննդեան թուականը կը համապատասխանէ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի գաւկի տուեալներուն:

Թերթը փորձած է ճշդել Ատրպէյճանի նախագահի մամուլի խօսնակ Ազար Գասիմովին գործարքի մանրամասնութիւնները, սակայն վերջինս հրաժարած է որեւէ մեկնաբանութիւն տալ:

Միլիոնաւոր տոլարներու կալուածները յայտնաբերուած են նաեւ Ալիեւի աղջիկներուն անունով, ընդհանուրը հասցնելով 77 միլիոն տոլարի:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՊԱՁԱՆԾԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ  
  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Քեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԵՐԱՔՆՆԻՉԸ ԱՆՓՈՓՈՒՆ ԹՈՂԵՑ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԴԱՏԱՎԵՌՈՐ



Քաղաքական քանտարկեալ Նիկոլ Փաշինեան Մարտ 9-ի դատավարութեան ընթացքին

Հայաստանի վերաքննիչ դատարանը Երեքշաբթի, Մարտ 9-ին որոշեց մերժել Նիկոլ Փաշինեանի պաշտպանների եւ մեղադրող կողմի բողոքները, սակայն համաներում կիրառեց «Հայկական ժամանակ»-ի գլխավոր խմբագրի նկատմամբ:

Դատարանը անփոփոխ թողեց ընդհանուր իրաւասութեան դատարանի Յունուարի 19-ի վճիռը, որով Փաշինեանը դատապարտուել է 7 տարուայ ազատազրկման, սակայն որոշեց կիրառել համաներում եւ կիսով չափ կրճատել պատժի չկրած մասը:

Ըստ այդմ, Նիկոլ Փաշինեանը անազատութեան մէջ կը մնայ եւս 3 տարի եւ մօտ 2 ամիս:

Փաշինեանի պաշտպան Լուսինէ Սահակեանը, լրագրողների հետ գրոյցում մեկնաբանելով վերաքննիչ դատարանի վճիռը, յայտարարեց. - «Խայտառակ դատա-

կան ակտ կայացրեցին: Մենք միշտ սասկէ ենք, որ իրենց համաներում մենք չենք սպասում, որովհետեւ Նիկոլ Փաշինեանը յանցագործութիւն չի գործել: Մենք արդար դատական ակտ էինք ակնկալում՝ արդարացման դատավճիռ: Վերջին հաշուով, մեղադրական դատական ակտ կայացրեց ակնյայտ անմեղ անձի նկատմամբ»:

Վերաքննիչ դատարանում Փաշինեանի պաշտպանական կողմը պահանջում էր իրենց պաշտպանեալի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ, իսկ դատախազ Յարութիւն Յարութիւնեանը պահանջում էր Նիկոլ Փաշինեանին մեղաւոր ճանաչել Քրէական օրէնսգրքի 316-րդ յօդուածի առաջին մասով եւս՝ իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու համար, եւ աւելի խիստ պատիժ սահմանել նրա նկատմամբ:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՀԱՍԱՐ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ Է ԴԱՌՆՈՒՄ ՆԱԵՒ «ՊԱՅՔԱՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՈՒԹԻՒՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումն ու Ղարաբաղեան հակամարտութիւնը եղել եւ մնում են Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) քաղաքական օրակարգում իբրեւ բարդագոյն մարտահրաւէրներ, սակայն վերջին շրջանում իշխանութիւնները սկսել են «տնտեսական տեռորի» նոր ալիք, ինչը ՀԱԿ-ի համար օրակարգային է դարձնում նաեւ պայքարի սոցիալական ուղղութիւնը: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Հայ ազգային կոնգրէսի մամուլի խօսնակ Արման Մուսիսեանը:

Նախանշելով Կոնգրէսի առաջիկայ գործողութիւնները, Մուսիսեանը, ի շարս այլ ծրագրերի, յատուկ ուշադրութիւն հրաւիրեց ՀԱԿ-ի նախաձեռնած զանգուածային ստորագրահաւաքի վրայ՝ գազի սակագների «բացարձակապէս չհիմնաւորուած բարձրացման դէմ» հրապարակային դատավարութիւն յարուցելու նպատակով:

«Հայ ազգային կոնգրէսի համար կարեւոր-անկարեւոր, առաջնային եւ ոչ առաջնային խնդիր գոյութիւն չունի: Այն խնդիրները, որոնք հասարակութեան համար ունեն կենսական նշանակութիւն,

մշտապէս մեր ուշադրութեան կենտրոնում են», - յայտարարեց Մուսիսեանը:

ՀԱԿ-ի խօսնակը զնահատեց նաեւ ընդդիմութեան վերջին հանրահաւաքը. - «Հաշուի առնելով այն, որ իշխանութիւնները մի հսկայական ռեսուրս էին ներդրել հանրահաւաքը խափանելու համար, եւ կարող էմ Կոնգրէսի անուանից վստահութեամբ յայտարարել, որ մենք անցկացրեցինք փայլուն հանրահաւաք՝ ինչպէս բովանդակային, այնպէս էլ հասարակական աջակցութեան առումով»: Հայ ազգային կոնգրէսի համար օրակարգային է դառնում նաեւ «պայքարի սոցիալական ուղղութիւնը»:

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումն ու Ղարաբաղեան հակամարտութիւնը եղել եւ մնում են Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) քաղաքական օրակարգում իբրեւ բարդագոյն մարտահրաւէրներ, սակայն վերջին շրջանում իշխանութիւնները սկսել են «տնտեսական տեռորի» նոր ալիք, ինչը ՀԱԿ-ի համար օրակարգային է դարձնում նաեւ պայքարի սոցիալական ուղղութիւնը: Այս մասին օրը լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Հայ ազգային կոնգրէսի մամուլի խօսնակ Արման

ԿԱՐԳԵԼՈՒԻ՞Ց ԱՐԵՐԿՐԱՑՈՒՆ ՀՈՂ ԳՆԵԼ

«Ա1+»: «Այսօր Հայաստանում հող ունեն իրանի քաղաքացիները, թուրքիացի, վրաստանի քաղաքացիները, երեւի միայն Ադրբեջանի քաղաքացիները չունեն, այն էլ կարծում եմ ունեն պարսիկների անուամբ», - Մարտ 9-ին լրագրողներին տեղեկացրեց ԱԺ պատգամաւոր, ՄԴՀԿ վարչութեան անդամ վարդան Խաչատրեանը:



Պատգամաւորներ՝ Վարդան Խաչատրեան եւ Ռուզան Առաքելեան ասուլիսի ընթացքին

Նա համաձայն է «Հողային օրէնսգրքում» ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր Ռուզան Առաքելեանի առաջարկած փոփոխութիւններին, համաձայն որոնց օտարերկրացիներին, միջազգային կազմակերպութիւններին արգելու է ՀՀ սահմանամերձ գօտիներում հողի վաճառքը՝ սեփականութեան իրաւունքով: «Սա ազգային անվտանգութեան խնդիր է, - ասում է Ռուզան Առաքելեանը եւ հիմնաւորում իր առաջարկը տարբեր երկրների փորձի ուսումնասիրութեամբ, - թուրքիան էլ ունի նման սահմանափակող օրէնսգրքութիւն, իրանը, Ադրբեջանը, անգամ եւրոպական այնպիսի երկրներ, ինչպիսիք են Յունաստանն ու Գերմանիան»: Տիկին Առաքելեանն ասաց, որ իր մտայնացումն աւելի վաղ է եղել, քան հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման շուրջ բանակցութիւնները:

Յիշեցնենք, որ նախագծի քննարկումը 30 օրով յետաձգուել էր, իսկ կառավարութիւնը նախագծի հեղինակին յորդորել է հրաժարուել սահմանափակման կիրառման յստակ չափից եւ որեւէ թիւ չնշել: Օրինագծի նախնական տարբերա-

կում հեղինակը առաջարկում էր սահմանափակել պետական սահմանից մինչեւ 25 կմ հեռաւորութեամբ գտնուող հողերի վաճառքը: Կառավարութիւնը հիմնաւորել է, որ հնարաւոր է այդ շրջանակներից դուրս, բաց ռազմավարական նշանակութիւն ունեցող հողակտորի վաճառքի մասին խօսք լինի եւ օրէնքն այդ դէպքում խոչընդոտի կառավարութեանը՝ վաճառքի յայտը մերժելու հարցում:

Ռուզան Առաքելեանին համոզիչ էր թուացել այս պարզաբանումը եւ նա հրաժարուել է «25 կմ» նշելուց:

Վարդան Խաչատրեանը գտնում է, որ պէտք էր յստակ ամրագրել, այլապէս շատ դժուար է զանազանել սահմանամերձ գօտի հասկացութիւնը: Ըստ Խաչատրեանի, 25 կմ-ը միջազգային պրակտիկայում ընդունուած է որպէս հրետակոծման դիմ: Իսկ այսօր Տաւուշի մարզի որոշ գիւղեր, որոնք ռազմական գործողութիւնների ընթացքում ենթարկուել են հրետակոծութեան, հիմնայատակ փլուզուած շէնքեր կան, անգամ գոհներ, կառավարութիւնն այն չի ընդունում որպէս սահմանամերձ գօտի:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ Է ՍՏՈՒԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Հայաստանում ՏՏ ընկերութիւնների արտադրանքը չի սպառուում, քանի որ գործարարները չեն պատկերացնում տեղեկատուական ծրագրերի արդիւնաւէտութեան մասին, կամ չեն ցանկանում նուազեցնել իրենց բիզնեսի ստուերային հատուածը: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ հարցազրոյցում ասաց «Նորք» տեղեկատուավերլուծական կենտրոնի տնօրէն Հայկ Չոբանեանը, աւելացնելով, որ ՏՏ հայաստանեան ընկերութիւններն իրենց արտադրանքն իրացնում են հիմնականում արտասահմանում, քանի որ տեղական շուկայում սպառում չեն կարողանում ապահովել: «Հայաստանում բիզնեսը հսկայական ստուերային հատուած ունի, իսկ տեղեկատուական տեխնոլոգիաներով աշխատելու դէպքում անհ-

նար է բիզնեսում ստուերային հատուած ունենալ, երեւի թէ այս է պատճառների մէկը, որ գործարարները պարզապէս չեն ցանկանում օգտագործել նոր տեխնոլոգիաները», - ասաց Չոբանեանը:

Ըստ «Նորքի» տնօրէնի, ընկերութեան աշխատակիցները փորձում են այլ ոլորտներում աշխատող ընկերութիւնների հետ կապեր հաստատել, բացատրել, որ տեղեկատուական տեխնոլոգիաները կարեւոր նշանակութիւն ունեն բիզնեսի համար, որ դրանց միջոցով հնարաւոր է ծախսերը զգալիօրէն նուազեցնել, բացառապէս: Հայաստանի տնտեսութեան միւս ճիւղերում աշխատող ընկերութիւնների սեփականատէրերը պարզապէս կարեւորութիւն չեն տալիս տեղեկատուական տեխնոլոգիաների կիրառմանը:

Մուսիսեանը:  
Նախանշելով Կոնգրէսի առաջիկայ գործողութիւնները, Մուսիսեանը, ի շարս այլ ծրագրերի, յատուկ ուշադրութիւն հրաւիրեց ՀԱԿ-ի նախաձեռնած զանգուածային ստորագրահաւաքի վրայ՝ գազի սակագների «բացարձակապէս չհիմնաւորուած բարձրացման դէմ» հրապարակային դատավարութիւն յարուցելու նպատակով:  
«Հայ ազգային կոնգրէսի համար կարեւոր-անկարեւոր, առաջնային եւ ոչ առաջնային խնդիր

գոյութիւն չունի: Այն խնդիրները, որոնք հասարակութեան համար ունեն կենսական նշանակութիւն, մշտապէս մեր ուշադրութեան կենտրոնում են», - յայտարարեց Մուսիսեանը:

ՀԱԿ-ի խօսնակը զնահատեց նաեւ ընդդիմութեան վերջին հանրահաւաքը. - «Հաշուի առնելով այն, որ իշխանութիւնները մի հսկայական ռեսուրս էին ներդրել հանրահաւաքը խափանելու համար, եւ կարող էմ Կոնգրէսի անուանից վստահութեամբ յայտարարել, որ մենք անցկացրեցինք փայլուն հանրահաւաք:

ԼՈՒՐԵՐ

«ԵԿԵԼ Է ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ» ԱՍԵԼ Է ԳՈՐԱՆ ԼԵՆՄԱՐԿԸՐ

«ԹԵՐԹ»: Եկել է ղարաբաղեան հակամարտութիւնը կարգաւորելու ժամանակը: Այս մասին, ԱՊԱ-ի փոխանցմամբ, Վրաստանում յայտարարել է ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահի՝ Լեոնային Ղարաբաղի հակամարտութեան հարցերով յատուկ ներկայացուցիչ Գորան Լենմարկը:



ԵԱՀԿ յատուկ ներկայացուցիչ Գորան Լենմարկը

«Մենք շատ կարեւոր հանդիպումներ կ'անցկացնենք երկու երկրների նախագահների հետ: Կարծում եմ՝ եկել է ժամանակը ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման ուղին գտնելու համար: Իմ կարծիքով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունէութիւնը նշանակում է խնդրի կարգաւորման ուղիներ փնտնելու համար անհրաժեշտ հենքի առկայութիւն: Մակայն այստեղ կարեւորն այնպիսի ուղի գտնելն է, որը ձեռնառու կը լինի երկու երկրներին եւ երկու պետութիւնների նախագահներին: Խնդրի կարգաւորումն Ադրբեյջանի համար աւելի կարեւոր է, քանի որ այդ երկիրն ունի մեծ թուով փախստականներ եւ վերաբնակեցուածներ»,- նշել է Լենմարկը՝ աւելացնելով, որ ղարաբաղեան հակամարտութեան կար-

գաւորման գործընթացում առաջընթաց է նկատուում:

«ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկութիւնների հիման վրայ շարունակուում են արտգործնախարարների եւ նախագահների մակարդակով հանդիպումները: Ես ղարաբաղեան հիմնախնդրի շուրջ ստեղծուած ներկայ վիճակը գնահատում եմ որպէս որոշումներ կայացնելու ժամանակ: Երկու նախագահներն էլ, հաշուի առնելով առկայ հնարաւորութիւնները, պէտք է ջանքեր գործադրեն հակամարտութեան կարգաւորման հարցում համաձայնութեան հասնելու համար»,- ասել է Լենմարկը:

ՆԱԼԲԱՆԴԵԱՆՆ ՈՒ ԼԱԻՐՈՎԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Աշխատանքային այցով Մոսկուայում գտնուող Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը Մարտի 8-ին հանդիպել է իր ուսուցիչ գործընկերոջ՝ ՌԴ արտաքին գերատեսչութեան ղեկավար Սերգէյ Լաւրովի հետ, որի ընթացքում տեսակէտներ են փոխանակուել երկկողմ եւ միջազգային օրակարգի մի շարք հարցերի շուրջ:

Երկրների ղեկավարների միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների իրականացման ընթացքը, հայ-ռուսական դաշնակցային յարաբերութիւնների հետագայ զարգացմանն առնչուող հարցեր:

Երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչութիւնների ղեկավարները հանգամանօրէն անդրադարձել են ԼՂ հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացին: Այս մասին յայտնուում են ՀՀ ԱԳՆ-ից:

Նախարարներ Նալբանդեանը եւ Լաւրովը քննարկել են երկու

ԹՈՒՐԵԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՊԱՄԱԻՐԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՃԱՆԱՉԵԼ ՐԱՅՈՑ ՅԵՂԱՄՈԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ ՐԱՅԱՍՏԱՆԻՑ

Թուրքիան պէտք է ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը եւ ներողութիւն խնդրի Հայաստանից: Այդ մասին յայտարարել է Թուրքիայի խորհրդարանի քրդական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան Բիթլիսից ընտրուած պատգամաւոր Մեհմէդ Նեզիր Քարաբաշը՝ մեկնաբանելով օրեր առաջ ԱՄՆ Կոնգրէսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովում Յեղասպանութեան բանաձեւի ընդունման փաստը:

Թուրքական Haber27-ի փոխանցմամբ՝ Քարաբաշը նշել է, որ ղարաբակցիւն հայերի հետ տեղի ունեցածը երբեք Թուրքիայում չի քննարկուել ու չի ընդունուել, եւ ամօթ է, որ Ապրիլի 24-ից առաջ ԱՄՆ-ը եւ Եւրոպական երկրները խորհրդարաններն են քննարկում դա, եւ ոչ թէ Թուրքիան:

ԵՐՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

Լորած են յատակ օրինակներով: 114 էջերէ բաղկացած գեկոյցին մէջ բացայայտուած թերութիւնները շտկելու նպատակով, կատարուած են մանրամասն առաջարկներ:

«Դատավարութիւնները ընթացած են բարձր լարուածութեան պայմաններու մէջ, ինչ որ խիստ բարդացուցած է դատարաններու աշխատանքը անոնցմէ պահանջելով արհեստավարութեան ամենաբարձր մակարդակ»,- յայտարարած է ԵԱՀԿ-ի ժողովրդավա-

րական Հաստատութիւններու եւ Մարդու իրաւունքների գրասենեակի տնօրէն դեսպան Եանէշ Լեւնարչիչ: «Յոյսով ենք, որ այս գեկոյցը կրնայ նոր թափ հաղորդել երկրի արդարադատութեան համակարգը միջազգային չափանիշներուն եւ ԵԱՀԿ-ի առջեւ պարտաւորութիւններուն համապատասխան բարեփոխելու՝ Հայաստանի իշխանութիւններու ջանքերուն»:

Ձեկոյցին մէջ մասնաւորապէս կ'առաջարկուի սահմանափակել նախաքննութեան ընթացքին ձեռքարկութիւնները եւ առաջնորդուիլ անմեղութեան կանխավարկածով,

ՄԻՒԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎ.

«ԵՍ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԷՒ ՂԱՐԱԲԱՂԻՆ ՏԱԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ»

«Այնպիսի հակամարտութիւններում, ինչպիսին ղարաբաղեան հակամարտութիւնն էր, յաղթողներ չեն լինում, պէտք էր պայմանաւորուել եւ այն ժամանակ, 80-ականների վերջին մենք կարող էինք ինչ-որ ձեւով լուծել Ղարաբաղի հարցը», - Մոսկուայում լրագրողների հետ հանդիպմանը, պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, յայտարարեց ԽՍՀՄ վերջին նախագահ, Նոբելեան մրցանակակիր Միխայիլ Գորբաչովը:



Խորհրդային Միութեան նախկին նախագահ, Միխայիլ Գորբաչով

«Օրինակ, ես առաջարկում էին Ղարաբաղին տալ հանրապետութեան կարգավիճակ: Ադրբեյջանի այն ժամանակուայ ղեկավարութիւնը՝ Վեգիբովին էր, կարծեմ, ուզում էր համաձայնուել, բայց յետոյ չստացուեց: Այն ժամանակ, գուցէ, հնարաւոր լինէր խնդիրը կարգաւորել, իսկ հիմա արդեն հնարաւոր չէ պատկերացնել, որ Ղարաբաղը նորից լինի Ադրբեյջանի կազմում», - յաւելեց ԽՍՀՄ-ի նախկին առաջնորդը՝ ընդգծելով. - «Հիմա նորից պատերազմական կոչեր են հնչում, եւ պէտք է թոյլ տալ, որ Ղարաբաղում նորից պատերազմ սկսուի, պէտք է բանակցել: Ուրիշ էլք չկայ: Պատերազմը պէտք է բացառուել, հակառակ դէպքում՝ դրանում ներգրաւուած կը լինեն նաեւ մեծ տէրութիւնները»:

սխալ քաղաքականութեան հետեւանքն էր:

Ձեկոյցի ներկայացումից յետոյ «Ազատութիւն» ռադիոկայանին տուած բացառիկ հարցազրույցում Գորբաչովը որոշ մանրամասներ է վերլուծել ղարաբաղեան հարցի լուծման իր ջանքերի մասին:

«Իրականում 80-ականներին Ղարաբաղը տխուր վիճակում էր. իշխանութիւններն ուշադրութիւն չէին դարձնում Ղարաբաղին: Նոյնիսկ հնարաւոր չէր Ղարաբաղից կապուել, օրինակ, Երեւանի հետ: Ղարաբաղը չէին ֆինանսաւորում», - նշեց ԽՍՀՄ-ի նախկին առաջնորդը:

«Ինձ թուում է պէտք էր աջակցել Լեոնային Ղարաբաղին, կարգավիճակ տալ: Պէտք էր աջակցել նաեւ տնտեսապէս, պէտք էր այնպէս անել, որ մարդիկ կարողանային հանգիստ կապ ունենալ Երեւանի հետ: Յետոյ, իհարկէ, մենք Ղարաբաղին գումարներ յատկացրեցինք, իսկ թէ ինչպէ՞ս ծախսուեցին այդ գումարները՝ չգիտեմ», - նշեց Գորբաչովը: - «Այն ժամանակ ինձ ասում էին, որ ես սիրում եմ հայերին, եւ չեմ սիրում ազրբեյջանցիներին: Ինչպիսի չիմարութիւն», - եզրափակեց ԽՍՀՄ-ի վերջին նախագահ, Նոբելեան մրցանակակիր Միխայիլ Գորբաչովը:

ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ ՆՈՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄՈՒՏՔ՝ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐԵՆ ՆԵՐՍ

Կիրակի, 7 Մարտ 2010-ի երեկոյեան, Նիկոսիոյ Նոր Սերունդի ակումբէն ներս տեղի ունեցաւ երդման պաշտօնական արարողութիւն, որուն ընթացքին Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան միացան հաւատաւոր նորագիրներ:

յան ձնառութիւնը, պատըրաստուածութիւնը եւ գաղափարական մարդու առանձնատկութիւնները: Ապա, Ս.Դ.Հ.Կ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Յակոբ Տիգրանեան նշեց, թէ Մարտ 8-ը Կիպրոսի Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 5-րդ ամեակն է եւ հետեւաբար՝ գեղեցիկ զուգարկութեամբ մը երդման արարողութիւնը կ'իմաստաւորուի առաւել եւս:

Երդման արարողութեան ներկայ էին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամներ, Ս.Դ.Հ.Կ. Կիպրոսի վարչի Մարմնի անդամներ եւ ընկերներ: Օրուան խորհուրդին անդրադարձաւ եւ կուսակցութեան գաղափարախօսութեան շուրջ բացատրութիւններ տուաւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ, Լիբանանի խորհրդարանի անդամ ընկ. Սեպուհ Գալփաքեան: Ան վերառաւ կուսակցականութեան

Այնուհետեւ, նորագիր ընկերներ հանդիսաւոր կերպով միացան կուսակցութեան շարքերուն՝ «ըլլալու գաղտնապահ, կարգապահ» եւ հաւատաւոր գինուորները Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան:

Հուսկ, տեղի ունեցաւ շնորհաւորութիւններ ընկերներու կողմէ:

միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու դատարաններու մէջ մեղադրող եւ պաշտպանական կողմերու հաւասարութիւնը, ամբողջական քննութիւն իրականացնել՝ կապ-

ուած խոշտանգումներու եւ վատ վերաբերմունքի վերաբերեալ բոլոր պնդումներուն հետ, բացառել ապօրինի միջոցներով ապացուցներու ձեռք բերելը:

ArmenienInfo.net News. Informationen. Kommentare.

ԼՈՒՐԵՐ

ՌՈՊԸՐԹ ՖԻՍՔ: ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՐՆ ՈՒ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԿՐՆԱՆ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼԵԼ ԶԱՍՈՁՈՒԵԼՈՒ ԶԱՍԱՐ ՈՐ ԶԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է

Եթէ ԱՄՆ նախագահ Պարաք Օպաման եւ պետքարտուղար Հիլըրի Բլինթընը կը ցանկանան համոզուիլ Հայոց ցեղասպանութեան իսկութեան մասին, անոնք կրնան Լիբանան գալ եւ այցելել Արևմտա-արևելյան փոքր բնակավայրը՝ մայրաքաղաք Պէյրութէն ոչ հեռու, - բրիտանական «The Independent» թերթի էջերուն մէջ կը գրէ Մերձավոր Արեւելքի թերթի սեփական թղթակից Ռոբերտ Ֆիսքը:

Լրագրողը, որ արդէն 25 տարի կ'աշխատի Պէյրութի մէջ, ցոյց կու տայ տեղ մը, ուր թաղուած են մօտ 300 հայ որբեր:

Ֆիսքը կը նշէ, որ «այդ երեխաները մահացած են քոլերայէն եւ սովէն, մինչ թրքական իշխանութիւնները կը փորձէին գանոնք թրքացնել Արևմտա-արևելյան կաթոլիկ քոլէճներէն մէկուն մէջ, որու մէկ ննջասենեակի մէջ այդ ժամանակ 1200 երեխայ կ'ապրէր»:

Լրագրողը կը նշէ, որ «Պարաք Օպաման եւ անոր հաւատարիմ գլխակից Հիլըրի Բլինթընը, որ ամէն կերպ կը փորձեն թոյլ չտալ ԱՄՆ Կոնգրեսի կողմէն 1,5 միլիոն հայերու սպանութեան ճանաչումը, պէտք է գան այդ գիւղը եւ կարծելով ամօթէն, իջեցնեն գլուխները»:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՐՏ 1-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄ



Փետրուար 28-ին «Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու իրաւունքներու Ընկերակցութիւնը, ՄԴՀԿ Ամերիկեան Արեւմտեան շրջանի փաստաբանային գրասենեակին մէջ կազմակերպած էր՝ քննարկում Մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձութիւններու կապակցութեամբ: Քննարկման սկիզբը ներկաները մէկ րոպէ լուծեցին յարգեցին Մարտի 1-ի գոհերու յիշատակը: Քննարկման գեկոյցով հանդէս եկան Ընկերակցութեան «Պետութիւն եւ իրաւունք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր փաստաբան Արմէն Ոսկերչեանը, ՄԴՀԿ Ամերիկեան Արեւմտեան շրջանի ներկայացուցիչ Սուրէն Խուրանեանը: Ելուց լուծեցաւ նաեւ Հայաստանի Ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցիչ՝ Լեւոն Բաբասեանը: Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Ընկերակցութեան ղեկավար փաստաբան Կարօ Կարապետեանը: Ելուցներուն մէջ նշուեցաւ, որ 2008թ Մարտի 1-ին՝ Հայաստանի նախկին եւ ներկայիս իշխանութիւնները փաստօրէն իրականացրած են պետական յեղաշրջում, Հայաստանի քաղաքացիներու նկատմամբ կիրառելով տարաբնոյթ բռնութիւններ եւ սպանութիւն: Այնուհետեւ, վերջին երկու տարուայ ընթացքին անոնք ջանք չխնայեցին իրականութիւնը ներկայացնելու գլխիվայր, իրենց կողմէ կատարուած յանցագործութիւնները բարդելով, սահմանադրական կարգը պաշտպանելու նպատակով փողոց դուրս եկած, Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու վրայ: Իսկ այսօր, ի տես իրենց անհիմն մեղադրանքներու բացառապէս վարկաբեկման, կը փորձեն ամէն կերպ Մարտ 1-ի էջը «Փակուած» տեսնել: Քննարկման վերջաւորութեան տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակութիւն ու ապա ընդունուեցաւ Մարտի 1-ը դատապարտող բանաձեւ:

ՍԱՐԿՈՁԻ- ՍԱՐԳՍԵԱՆ ԶԱՆԴԻՊՈՒՄ

Շարունակուած էջ 1-էն

սկզբունքները աշխուժացնելու եւ անոնց շունչ հաղորդելու մասին, ըսելով, թէ հակամարտող կողմերը պէտք է «պատասխանատուութիւն ստանան եւ կատարեն բոլոր անհրաժեշտ քայլերը, որոնք կ'առաջնորդեն դէպի խղաղութիւն եւ շահաւէտ կը դառնան ոչ միայն երկու երկիրներու, այլեւ ամբողջ տարածաշրջանի համար»:

Անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններուն՝ Ֆրանսայի նախագահը կարեւորած է առաջ շարժելու եւ պատմական առիթը չկորսնցնելու օգտին:

Նիկոլա Սարկոզի օրինակ տուած է Ֆրանսայի եւ Գերմանիոյ պարագան, որոնք երկարատեւ ջանքեր գործադրելով հասած են խաղաղութեան: «Այդ քայլին կը սպասեն մեծ յոյսով ոչ միայն Ֆրանսան, այլեւ ամբողջ միջազգային հանրութիւնը», - ըսած է Ֆրանսայի նախագահը:

Սերժ Սարգսեան իր կարգին ըսած է, որ Հայաստանի մէջ եւ աշխարհասփռու հայութեան կողմէ Ֆրանսան կ'ընկալուի որպէս մերձավոր բարեկամ երկիր, իսկ միջազգային հարթակի վրայ՝ վստահելի գործընկեր ու դաշնակից:

ՍԻԼՎԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԱԾ Է

Իրանի հայագի քաղաքացի Սիլվա Յարութիւնեանը, որ ձերբակալուած էր Թեհրանի լրտեսութեան եւ հակակառավարական գործունէութեան մեղադրանքով, ազատ է արձակուած է:



Ինչպէս հաղորդեցին NEWS.am-ի աղբիւրները, ներկայիս 34-ամեայ Յարութիւնեանը Հայաստան կը գտնուի:

Սիլվա Յարութիւնեանը ձերբակալուած էր 2008թ. Յունիսի 26-ին: Իրանի իշխանութիւնները զինք մեղադրած էին Միացեալ Նահանգներու հովանաւորած դաւադրութեան մասնակցելու եւ իսլամական վարչակազմը տապալելու մէջ, եւ երեք տարուայ ազատագրկման դատապարտած էին:

Իրանցի կինը կը զբաղուէր մարդասիրական գործունէութեամբ, կը համագործակցէր ամերիկեան կազմակերպութիւններու հետ: 2009թ. ԱՄՆ պետքարտուղարութիւնը կոչ ըրած էր ազատ արձակել Յարութիւնեանին, անոր դէմ առաջադրուած մեղադրանքները անհիմն որակելով:

ԹՈՒՐԲԻԱ ՄՇԱԿԱԾ Է ԶԱԿԱՔԱՅԼԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ

Շարունակուած էջ 1-էն

պայմանները փոխուած են:

«Երբ նախագահ Օպաման ստանձնեց պաշտօնը եւ ես դարձայ պետական քարտուղար, մենք վճռեցինք, որ Թուրքիոյ եւ Հայաստանի կառավարութիւնները մերձեցնելու՝ Զուիցերիայի նախաձեռնած գործընթացը արժանի է սատարման, եւ մենք այդպէս ալ վարուեցանք», - ըսաւ Քլինթըն՝ յիշեցնելով, որ անձամբ ներկայ եղած է Զուիցերիոյ մէջ հայ-թրքական արձանագրութիւններու ստորագրման: - «Մենք կը կարծենք, որ այդ է երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու կարգաւորման ճանապարհին ծառայած ինդիւրներու լուծման պատշաճ եղանակը»:

«Զեմ կարծեք, որ որեւէ այլ երկիր պէտք է որոշէ՝ ինչպէս երկու երկիրները լուծեն իրենց միջեւ առկա ինդիւրները: Հետեւաբար, ինչպէս նախագահ Օպաման, այնպէս ալ ես, թէ՛ անցած տարի եւ թէ՛ այս տարի յստակեցուցինք, որ չենք հաւատար, որ Գոնկրէսի կողմէ որեւէ գործողութիւն տեղին է, եւ դէմ ենք ատոր», - յայտարարած է Քլինթըն:

Գոնկրէսի Յանձնաժողովի քուէարկութեան արդիւնքներու հրապարակումէն անմիջապէս ետք, որպէս բողոքի նշան Թուրքիա ետ կանչեց Ուաշինկթոնի մօտ իր դեսպանը:

Բանաձեւի վաւերացման հակադարձելու համար, Թուրքիոյ կառավարութիւնը արդէն իսկ մշակած է հակաքայլերու ծրագիր, որու համաձայն՝ պաշտօնական Անգարան պիտի գործէ միաժամանակ չորս ուղղութիւններու վրայ:

Ըստ թրքական մամուլին մէջ լոյս տեսած հրապարակումներուն, առաջին հանգրուանին հակաքայլերը գուտ քաղաքական բնոյթ պիտի կրեն: Հարցականի տակ է վարչապետ Էրտողանի Ապրիլին Ուաշինկթոն կատարելիք այցը՝ մասնակցելու միջուկային անվտանգութեան ինդիւրներուն նուիրուած միջազգային գագաթնաժողովին:

Թրքական կողմը տնտեսական գետնի վրայ եւս որոշ քայլեր մշակած է, վերատեսուութեան ենթարկելով ամերիկացի եւ թուրք նախարարներու երկկողմ տնտեսական հարցերով բանակցութիւններու ժամանակացուցը: Թրքական իշխանութիւնները նաեւ կը

մտածեն Միացեալ Նահանգներէն ներարկուող ապրանքներուն այլընտրանք գտնելու մասին:

Ռազմա-քաղաքական ոլորտին ներս թուրք-ամերիկեան համագործակցութեան գծով առայժմ որեւէ փոփոխութիւն նախատեսուած չէ:

Այս ասպարէզէն ներս հետազայ կտրուկ քայլերը ուղղակիօրէն կապուած են Գոնկրէսէն ներս յառաջիկային տեղի ունենալիք զարգացումներու հետ: Ըստ թրքական «Սապահ» թերթին, ծայրայեղ անհրաժեշտութեան պարագային, օրակարգի վրայ կրնայ յայտնուիլ ամերիկացիներու կողմէ Թուրքիոյ օդային տարածքէն օգտուելու եւ ռազմակայաններու հարցերը:

Այն պարագային երբ իրադարձութիւնները աւելի անբարենպաստ դառնան, թրքական դիւանագիտութիւնը ստիպուած պիտի ըլլայ ռազմավարական շրջադարձ կատարելով աւելի սերտացնել կապերը Ռուսաստանի հետ:

Բարձրաստիճան թուրք դիւանագետներէն մէկը վերջերս յայտնած է թէ, անբարենպաստ զարգացումներուն ի պատասխան՝ պաշտօնական Անգարան պիտի կեդրոնանայ Ռուսաստանի հետ կներգետիկ կապերու զարգացման վրայ:

Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի ընդունումը Թուրքիոյ մէջ արժանացաւ սուր քննադատութեան յառաջացուց բողոքի ակտի: Բողոքին միացան գործադիր եւ օրէնսդիր իշխանութեան ներկայացուցիչները, ինչպէս նաեւ ընդդիմութիւնը: Վարչապետ Ռեջէփ Թայիք Էրտողան ելուց լուսնայով իսթանպուլի մէջ գումարուած թուրք գործարարներու համաժողովին, ըսած է, - «Ո՞վ շահեցաւ բանաձեւի ընդունումէն: Ամերիկա՞ն, Հայաստան՞ը»: Հոնտորական հարցին Էրտողան ինք պատասխանած է՝ «Գոնկրէսի յանձնաժողովը մշակած է սցենար, որը իսկական կատակերգութիւն էր»:

«Թուրքիան վնաս չի կրէր Գոնկրէսի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի այդ որոշումէն, բայց կը վնասուի մեր երկկողմ կապերը: Թուրքիան չէ, որ կը տուժէ անկէ, պիտի տուժեն Թուրքիոյ հանդէպ վրէժխնդրութեամբ համակուած մեր մանրմունք թշնամիները», - գայրացած յայտարարած է թուրք վարչապետը:

# «ՉԲԱՐԵՓՈՒՆԵ՞Լ: ՓՈՒՆԵԼ ՅԻՄՆՈՎԻ՞Ն»

## Ելքեր եւ լուծումներ՝ ըստ Վահան Շիրխանեանի

- Երբ ՍԴՀԿ-ում անառողջ գործընթացներ սկսուեցին, դուք յայտարարում էիք, որ շարունակելու էք ՀԱԿ-ի հետ համագործակցութիւնը, մինչդեռ ՀԱԿ-ից յայտարարութիւններ հնչեցին Լիւդմիլա Սարգսեանի հետ համագործակցութեան պատրաստակամութեան մասին: Դուք ՀԱԿ-ի հետ հիմա համագործակցում էք կամ ի՞նչ ծրագրեր ունեք այդ առիթով:

- ՍԴՀԿ-ում եղած անառողջ վիճակի առողջացման պրոցեսներ են սկսուել: Ոչ թէ հակառակը: Մասնաւորապէս, վերաբացուել են «Հայկ Բժշկեանցի», Արմաւիրի մասնաճիւղերը, ստեղծուել են նոր կառույցներ Մասիսում, Արտաշատում եւ այլն: ՀԱԿ-ի հետ համագործակցութիւնը կուսակցութեան համար ինքնապատակ կամ գոյութեան պայման լինել չի կարող: ՍԴՀԿ-ի գլխաւոր նպատակը հայ ժողովրդին ծառայելն է, ներհայաստանեան եւ համահայկական խնդիրների ազգանպաստ լուծումներին օժանդակելն է: Այս գաղափարական, ազգային դաշտում ՍԴՀԿ-ն պատրաստ է համագործակցել բոլոր համախոհ ուժերի հետ:

- Դուք Հայ ազգային կոնգրեսի այն անդամներից էիք, ովքեր քննադատաբար էին վերաբերում ՀԱԿ-ի որդեգրած համեմատաբար պասիւ գործունէութեան ակնկալելով ակտիւ ակտիւ գործողութիւններ: Մասնակցել էք, արդեօք, ՀԱԿ-ի մարտիմէկեան հանրահաւաքին, եւ դրանից յետոյ որքանով է փոխուել ձեր վերաբերմունքը:

- Ձեռն կարողացել մասնակցել, նիւթերին ծանօթացել եմ եւ կարծիքս չի փոխուել: Համարում եմ, որ գործելաոճը յայտարարուած նպատակին սահմանադրական կարգի վերականգնում, օրինականութեան եւ ժողովրդավարութեան հաստատում, աղեկվատ չի:

- Որքանով են իրատեսական հանրահաւաքում հնչած պահանջները, մասնաւորաբար, մինչեւ աշուն արտահերթ համապետական ընտրութիւնների անցկացումը:

- Իհարկէ, իրատեսական են, եթէ Հայաստանի պայմաններում գտնուէր որեւէ մէկ այլ պետութիւն, որտեղ լինէր կայացած հասարակութիւն, քաղաքական էլիտա եւ քաղաքական դաշտ: Հայաստանում արտահերթ ընտրութիւններ հնարաւոր են միայն մի դէպքում, եթէ յանձնուեն ազատագրուած տարածքները եւ դրան չաջորդի Արցախի հայաթափումը: Իսկ իշխանափոխութիւն հնարաւոր է:

- Առանց նոր ընտրութիւնների՞:



- Իհարկէ, իշխանափոխութիւնները հիմնականում իրականացուել են ընտրութիւնների միջոցով: Բայց դրանք շատ անգամ լինում են անձերի փոխարինում եւ պահպանում են գոյութիւն ունեցած համակարգը: Մեզանում անհրաժեշտ է իշխանութեան փոփոխութեան, տրամաբանութեան եւ գործելաոճի արմատական փոփոխութիւն: Վարչակազմի այսօրուայ որդեգրած փոփոխութեան «իշխանութիւն յանուն իշխանութեան» սկզբունքը պէտք է փոխարինուի «իշխանութիւն յանուն ժողովրդին ծառայելու» սկզբունքով: Տրամաբանութիւնը պէտք է ձեւաւորուի համապետական հանրաքուէով՝ հաստատուած Ազգային ծրագրի պահանջներին համապատասխան: Գործելաոճի հիմքում պէտք է դրուեն արդար կառավարման եւ սոցիալական արդարութեան սկզբունքները: Սրանց իրականացումն է, որ կը բերի իրական իշխանափոխութեան: Իսկ տեսականօրէն այդ բոլորը կարող է իրականացնել նաեւ այսօրուայ վարչակազմը: Կամքի եւ վճռականութեան խնդիր է:

- ՀԱԿ-ը տնտեսական բարեփոխումների ծրագիր հրապարակեց, խօսուել է գազի սակագնի բարձրացման առիթով դատարան դիմելու մասին եւ այլն. ձեզ սոցիալիստական գաղափարներ կրող մարդուն, հոգեհարազատ է այս կերպ հանրութեան ակտիւացնելու գործընթացը:

- Հայաստանի տնտեսական համակարգը բարեփոխման ենթակայ է: Այն պէտք է փոխել հիմնովին: «Միացեալ Նահանգներում սկիզբ առած գլոբալ ֆինանսական ճգնաժամը թաղեց ոչ միայն Ուոլ-սթրիտի լեգենդար ֆինանսական կորպորացիաները, այլեւ լիբերալ կապիտալիզմի կոնցեպտիան...», - ասում է ԱՄՆ ամենաառաջատար վերլուծաբաններից մէկը՝ Ֆրանսիս Ֆուկույաման: Հատ-

ուածական լուծումները ոչ միայն ակտիւացում, այլեւ ոչինչ չեն տա: Գազի նախկին գինը նոյնպէս կրկնակի անգամ բարձր էր օպտիմալ գնից, էլեկտրական հոսանքի գինը կրկնակի անգամ բարձր է օպտիմալից: Հացի գինը թանկ է 2-3 անգամ: Ցեմենտը թանկ է բազմապատիկ անգամ: Այս շարքը անվերջ է: Միակ ելքը տնտեսական համակարգի փոփոխումն է: Այս համակարգում քաղաքացին կա ու մնալու է ընչազուրկ, իսկ գործարարը՝ հետապնդման եւ սնանկացման մշտական վտանգի մէջ:

- Երեկ ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովը ընդունեց Հայոց ցեղասպանութեան վերաբերել 252 բանաձեւը. հայկական կողմը ոգեւորուել է, Թուրքիան անգամ ԱՄՆ-ում իր դեսպանին ետ կանչեց: Ի՞նչ զարգացումներ կը յաջորդեն:

- Այո, արդէն 4-րդ անգամ է

բանաձեւը չաղթահարում յանձնաժողովի շեմը: Եւ ոգեւորութիւնն էլ հերթական անգամ է: Միացեալ Նահանգների քայլերը Ցեղասպանութեան հարցում այնքան կանխատեսելի են, որ մեր ոգեւորութեան վրայ կարելի է զարմանալ: Հայաստանը պէտք է շարունակի բացատրել մեծ տէրութիւններին այնքան, մինչեւ նրանք վերջապէս հասկանան, որ կա Թուրքիա-Հայաստան հակամարտութիւն, որը անհրաժեշտ է կարգաւորել, եւ կայ Հայութիւն-Թուրքիայի միջեւ Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման խնդիր: Իսկ նրանք ձգտում են մի ճանապարհ (այն էլ՝ հիմնականում իրենց համար, ոչ թէ Հայաստանի) բացել եւ համարել, որ Հայկական հարցին լուծում տուեցին: Կարծում եմ, որ բանաձեւը, կամայ թէ ակամայ, կարող է նոր ճնշումների ալիք բարձրացնել Արցախի վրայ:

Հարցազրույցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԱՆԻ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԹԱՓՈՒՆ»

Թրքական «Ենի Շաֆաքի» մէջ լոյս տեսած յօդուածով մը, դոկտ. Սետատ Լաչինեյր անդրադարձած է Հայաստան-Ամերիկա յարաբերութեանց, պնդելով, թէ Ուաշինկթըն ի գուր ջանք կը թափէ Հայաստանը սիրաշահելու համար, որովհետեւ Հայաստանի «թափու» Ռուսիոյ քովն է, այսինքն՝ Հայաստանը Ռուսիոյ ամբողջական տիրապետութեան տակ կը գտնուի:

Լաչինեյրի համաձայն, մինչ Հայաստան Ռուսիոյ դաշնակիցն է, Վրաստանն ու Ատրպէյճանը կը տեսնուին իբրեւ Արեւմուտքի դաշնակիցներ: Անոր համաձայն, Ամերիկա խելացի քաղաքականութիւն չի վարեր Կովկասի մէջ Հայաստանին նեցուկ կանգնելով, այլ պէտք է գործակցութիւնը սերտացնէ Վրաստան-Թուրքիա-Ատրպէյճան ճակատին հետ, հասնելով մինչեւ Կասպից ծովի շրջան ու Միջին Ասիա:

«Թուրքիայէն մինչեւ Չինաստան երկարող այդ ճակատին շնորհիւ, Ռուսիոյ ու Իրանի ազդեցութիւնները եւս կը նուազէին: Սակայն, բացի Պաքու-Թիֆլիս-ձէյջան խողովակաշարէն, Ամերիկա բաւականաչափ գորակցութիւն ցոյց չտուաւ Վրաստանին ու Ատրպէյճանին, ընդհակառակը, Ամերիկա՝ Թուրքիայէն ու Ատրպէյճանէն աւելի, Հայաստանին գորավիզ կանգնեցաւ», ըսած է ան՝ դժգոհելով, որ նախագահ Օպամայի ընտրութենէն ետք Ամերիկայէն աւելի ծանր ճնշում կը բանեցուի Հայաստանի սահմանը բանալու ուղղութեամբ:

«Հայաստանին բոլոր ենթակառուցները պարտքերու փոխարէն Ռուսիոյ հակակշիւն տակ դրուած են. բացի ատկէ, Իրանի եւ Թուրքիոյ սահմանները պաշտպանուած են ուսս գինուորներու կողմէ, Հայաստանի մէջ Ռուսիոյ կողմնակիցները այնքան ուժեղ են, որ դաւաճանի աչքով կը դիտուին այն անձերը, որոնք հայերու եւ ուսսերու բարեկամութիւնը խախտել կը փորձեն», աւելցուցած է Լաչինեյր՝ պնդելով, որ Ամերիկա անտեղի կերպով կը վշտացնէ Ատրպէյճանը եւ Վրաստանը: «Այս պատճառաւ է, որ Թուրքիա-Վրաստան-Ատրպէյճան եռեակի արեւմտասէր քաղաքականութիւնը բոլորովին փուլ գալու վրայ է», եզրակացուց ան՝

Լաչինեյրի պնդումով, ամերիկացիները եւ ուսսերը միայն Կովկասի մէջ է, որ նոյն ուղղութեամբ կը գործեն, եւ ասոր «միակ պատճառը Ամերիկայի հայկական Սփիւռքն է»:

«Հայկական ծագում ունեցող ամերիկացիները կը ծառայեն Ռուսիոյ շահերուն եւ ո՛չ թէ իրենց երկրին, այսինքն՝ Ամերիկայի շահերուն, պարզապէս վնաս հասցնելու համար Թուրքիոյ», գրած է Լաչինեյր եւ եզրակացուցած. «Միացեալ Նահանգները, Կովկասի մէջ Թուրքիան, Վրաստանը եւ Ատրպէյճանը Ռուսիոյ գիրկը նետելու գնով, գորավիզ կը կանգնի հայերուն, հակառակ այն իրողութեան, որ այս գորակցութեան պատճառով ուժանիւթի բազմաթիւ ծրագիրներ ընթացում կը կրեն»:

AUTHORIZED INDEPENDENT AGENT

# Anthem



Blue Cross

CA LIC.#0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐՔԵՔ ՈՒԵ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## BEDROS S. MARONIAN

818-500-9585



# ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ--140 ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ՝ ՆԱԵՒ ԳՈՐԾԻՉ

## ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՂԵՃԵԱՆ

Անցնող տարին ծննդեան 140 ամեակն էր մեծ բանաստեղծ եւ մեծ մարդ Յովհաննէս Թումանեանին: Այս առիթով, յատկապէս Հայաստանի մէջ կազմակերպուած այլաբանութիւն միջոցառումներով, հանրութեան ուշադրութիւնը վերստին բեւեռուեցաւ մեծ գրողի կեանքին, գործունէութեան եւ գրական ժառանգութեան վրայ:

Մենք եւս առիթը պատե՛հ կը գտնենք՝ անդրադառնալու Յովհաննէս Թումանեանի կեանքի ու գործունէութեան մէկ երեսին՝ համադրելով այդ մասին ցարդ եղած սպազորուած նիւթերը:

\*\*\*

Յովհաննէս Թումանեանի երիտասարդութեան սեմը կը համընկնի արեւմտահայութեան ազգային ազատագրական պայքարի գարթօնքին: Իր ժողովուրդի հոգեբով տառապող ռե՛կ երիտասարդի նման՝ Յովհաննէս Թումանեան եւս կը խանաղավառուի ազատագրական պայքարի գաղափարներով: Այդ շրջանին ամէնուրեք կը սկսին ստեղծուիլ հայրենասիրական-յեղափոխական խմբակներ: Պատահականութիւն մը Յովհաննէս Թումանեան կ'առաջնորդէ անդամակցելու ամէնէն նշանաւորներէն մէկուն:

1884 Սեպտեմբերին, երբ տակաւին 15 տարեկան Օհանէսը աշակերտ էր Թիֆլիսի Ներսիսեանէն ներս, վարձքով բնակութիւն կը հաստատէ Թիֆլիսի Սրբ. Աստուածածին եկեղեցու ժամկոչ մղտուսի Աւագ Շէկ-Վարդանեանի տանը: Փոխան վարձքի՝ Յովհաննէս տանտիրոջ պիտի տար Դսեղի հօրենական տունէն ստացած գիւղական մթերքը: Նոյն տան վերնաշարկը կը բնակէր Թիֆլիսցի փաստաբան Գրիգոր Գոլոշեանի ընտանիքը, որուն անդրանիկ գաւազը՝ Վարդան (Ալեքսանտր) Գոլոշեանը պիտի դառնար հայ ազգային-ազատագրական պայքարի նախավկաներէն մին: (1)

Ժամանակակիցներէն Անուշա-վան Աբովեան կը վկայէ. «Այդ ժամանակները Յովհաննէսի մէջ ինչ-որ հոգեկան փոփոխութիւն էի նկատում: Գաղտնիքը մի օր բաց արաւ ինձ: Գիշերները նա յաճախում էր մի յեղափոխական ընկերութեան գաղտնի ժողովներին եւ խոստանում էր մի անգամ էլ ինձ տանել հետը»: (2) Եւ իրօք, Յ. Թումանեան իր դասընկերօրը՝ Մելքոն Ասիլբէկեանի (3) հետ սկսած էր մասնակցել Գոլոշեանի խմբակի հաւաքներուն: Ան, միայն հաւաքներուն մասնակցելով, չի բաւակա-նանար. բանաստեղծին կողակիցը՝ Օլիկան, կը վկայէ. «Մի օր էլ եկաւ, թէ՛ քեզ եմ պարտական, կեանքս ազատեցիր: Ասում եմ՝ ինչո՞վ, ինչ է պատահել: Ասաց. - Չե՞ս իմանում, Ալեքսանտր Գոլոշեանի հետ որոշել էինք զնալ Տաճկահայաստան, հայրենիքն ազատելու, ես էլ իմ ամուսնուն վերադառնալու ծախեցի, մի ատրճանակ առա, պէտք է գնայի: Մեր նշանուէրը պատճառով իմ գնալը յետաձգուեց, իսկ գնացողները սպաննուէլ են ճանապարհին»: (4)

Վարդան Գոլոշեանի արարքը նոր մտածելակերպի մը ինքնաբերական եւ յախուռն արտայայտութիւնն էր: Այդ նոր մտածելակերպը ֆե-տայական շարժումն էր, որ իրմով



կը կլանէ, իրմով դէպի «Երկիր»-ի ազատագրութեան կը տանի հայրենասէր երիտասարդութեան ամբողջ փաղանգներ: Ֆետայական շարժումը կը դառնայ նոր ձեւաւորուող հայ յեղափոխական կուսակցութիւններուն գաղափարախօսութեան ամենէն հակառակուսին եւ գործունէութեան հիմնական սպարէզը:

Արեւմտահայութեան ազատագրութեան գաղափարը դէպի Հնչակեան կուսակցութիւն կ'առաջնորդէ երիտասարդ Յովհաննէս Թումանեանը: Ժամանակակիցները կը վկայեն, թէ Յ. Թումանեանի Հնչակեան կուսակցութեան յարումը տեղի ունեցած է Ղազարոս Աղայեանի ազդեցութեան տակ, որուն հետ ան ունէր ընկերական ջերմ կապեր: (5) Յովհաննէս Թումանեան կը շարունակէ ներկայ գտնուիլ գաղտնի հաւաքներու: Ըստ Արշակ Բարխուդարեանի՝ այդ հաւաքներուն կը տրուէր ընկերական բնոյթ, կը պատրաստուէր ուստեսողէնով եւ խմբիչքով զարդարուած սեղան մը, ուստիկանութեան յանկարծական միջամտութեան պարագային՝ հաւաքին ընկերային բնոյթ տալու համար: (6) (Այդ հաւաքներէն մէկուն Յ. Թումանեանի պատումը կու տանք կողքի սիւնակով):

Գաղտնի ժողովներու մասնակցելէն անկախ՝ Յ. Թումանեան կը կատարէ նաեւ կուսակցական յանձնարարութիւններ: Անոր կատարած առաջին յանձնարարութիւնը կ'ըլլայ այցելութիւնը Պաքու՝ «Օճախ»-ին, 1895 Մարտ 1-ին:

Նախ «Օճախ»-ին մասին: Այդ շրջանին, Պաքուի Մեսրոպեան եւ Հռիփսիմեան դպրոցներու խումբ մը երիտասարդ ուսուցիչներ, ինս-յոզաբար ապրելու համար, միասնաբար կը վարձեն յարկաբեժին մը: Երիտասարդ ուսուցիչները՝ բոլորն ալ հնչակեան, այդ բնակարանին մէջ կը կազմակերպեն երեկոներ, ուր կը քննարկուին ազգային, հասարակական եւ գրական այժմէական հարցեր: Տան հիմնական բնակիչներուն կողքին՝ Սիմոն Հովիւեան (Ս. Տաշիր)7, Սեդրակ Պալայեան, Մկրտիչ Բեգլարեան, Սահակ Մատինեան, Արամ Նազարէթեան, Սիսակ Օհանեան, երեկոներուն կը յաճախեն նաեւ գաղափարակից ուսուցիչներ եւ ուսանողներ: Բնակարան-հաւաքատեղին կը կոչուի «Օճախ»: «Չուտ ընկերական, տնտեսական հողի վրայ հիմնուելով՝ «Օճախ» այնուհետեւ մի տեսակ հնչակեան ակումբի վերածուեց».- կը գրէ Ս. Տաշիր: (8) Հնչակեան կուսակցութեան արխիւին մէջ կը գտնուի Պաքուի «Բանուոր» մասնաճիւղի նամակը յղուած Կեղրոնական Վարչութեան,

ուր մասնաճիւղերի վարչութիւնը կը բողոքէ, թէ ինչպէս իր շրջանէն ներս գոյութիւն առած է կուսակցական ակումբ մը՝ առանց իր գիտակցութեան...): «Օճախ»-ի հիմնական բնակիչները կապ կը հաստատեն Թիֆլիսի Հնչակեան վարչութեան հետ եւ վերջինէս կը պահանջեն գործիչ-քարոզիչներ «Օճախ»-ի հաւաքները աւելի նպատակայարմար դարձնելու համար: Թիֆլիսէն առաջին անգամ «Օճախ»-ին կ'այցելէ Ղազարոս Աղայեան: Երկրորդ այցելողը կ'ըլլայ Յովհաննէս Թումանեան, որ «Օճախ»-ի սեմէն հազիւ ներս մտած՝ յանպատրաստից կ'արտասանէ «Օճախ»-ին նուիրուած ոտանաւոր մը, որուն տուններուն կրկնու-

թիւնը կ'ըլլայ.

Այ... ձեր «օճախումը»,

Ձեր «Օճախ» պուճախումը...

Յ. Թումանեան «Օճախ»-ի հիւրը կ'ըլլայ 2-3 շաբաթ: Այդ միջոցին ան կուսակցական-կազմակերպչական հարցերով չի զբաղիր: Ս. Տաշիր կը վկայէ. «Թումանեանը եկել էր իբրեւ հնչակեան փրոփակախօս կամ ներկայացուցիչ, բայց այդ ուղղութեամբ շատ քիչ բան ունէր անելու: Եւ երբ որ իօսք էր լինում նրա առաքելութեան մասին, իր հիւժո՞րիստական ձեւերով ձեռք էր անում մեզ, ասելով. - Տօ՛ւ, հնչակեանս ո՞րն է, դաշնակցականս՝ ո՞րը: - Այնքան

Շարք էջ 17

### ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ...

Այդ պայմաններու եւ պահանջներու լրումին 1931 թուի Յունիսի 16-ին Երուսաղէմի միաբանական ժողովը Առաքելական Աթոռի Պատրիարք ընտրեց Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան՝ Արմաշի փայլուն ասներէն եւ Եգիպտոսի վաստակաւոր թեմակալ Առաջնորդը: Նախապատրաստութեանց համար նախորդ տարուան 1930 թուի Յունիսի 19-ին Միաբանական ժողով կը գումարէր Մեսրոպ Նշանեան Տեղապահ Սրբազանը ու կը կազմէր ներքին Կանոնագրի յաւելեալ չորս յօդուածներ (20-23), ուր կը ճշդուէին Միաբանական ժողովի բացարձակ իրաւունքն ու պարտականութիւնը կատարելու Պատրիարքի ընտրութիւնը: Յօդուածներէն վերջինը պայման կը դնէր չիշեալ ընտրութեան վաւերացումը Անգլիոյ հոգատար կառավարութենէն, ուղղակի Բրիտանիոյ Թագաւորին հրովարտակով, եւ ապա էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի վաւերացումը, որ սակայն նախ ինդրոյ առարկայ եղաւ:

Այստեղ արդէն երկու ինդիրներ կը յարուցուէին: Նախ՝ ընտրութեան մէջ աշխարհական տարրին բացակայութիւնը, ինչպէս գոյութիւն ունէր Կ. Պոլսոյ պատրիարքութեան նախապէս կատարած ընտրութեանց մէջ: Հայ ազգը կը մերժէր նման պարագայ մը այս անգամ, Երուսաղէմի պատրիարքին ընտրութիւնը յանձնելով բոլորովին եւ միայն Միաբանական ժողովին:

Երուսաղէմ սակայն այդ կէտը, այսինքն ազգին աշխարհական տարրին հակակշիռը եւ անոր մէջ անոնց նախատեսելի մասնակցութիւնը կը փարատէր այն մտածումով որ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետը, որ պիտի վաւերացնէր կատարուած ընտրութիւնը, ինքնին ընտրուած ըլլալով հայ ազգի հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներէ բաղ-



կացեալ Ազգային-Եկեղեցական ժողովէ մը, ամբողջ ազգը կը ներկայացնէր:

Երկրորդ ինդիրը, աւելի լուրջ, կուգար Անգլիոյ իշխանութիւններէն որոնք կը մերժէին Մայր Աթոռի վաւերացումը, որուն համար ալ Միաբանութիւնը գաջն «նախընթաց մը չունենալուն համար, այս անգամուան համար առկա թողուց գաջն», անշուշտ Մայր Աթոռի վերապահութեամբ, ու ինդրին լուծումը «յանձնելի պարագայ մը նկատեց նորընտիր պատրիարքին»: Թէեւ հարցը մնաց ինդրայարոյց, եւ ոմանք Միաբանութեան հապճեպ յետս կոչումը «անօրինական որոշում» նկատեցին, այս կերպ ձեռքազատուելով ազգին եւ հայ ժողովուրդին հակառակ, որով ազգը գրկուած էր Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան մէջ ձայն ունենալու դաւաճող իրաւունքից»:

Հարցի լուծման միակ կերպն էր Միաբանութեան առած ստիպողական «յետս կոչման» որոշումը, որովհետեւ Միաբանութիւնը հարկին տակ կը գտնուէր առժամաբար համակերպելու Անգլիական կառավարութեան պահանջին, նախ չկորսնցնելու հարար արդէն իսկ ուշացած պատրիարքական ընտրութեան առիթը, եւ ապա չվտանգելու ամենէն կարկառուն հոգեւորականին՝ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեանի հաւանական ընտրութիւնը որ արդէն յստակ էր բոլորի մտքին մէջ: Ապագան արդէն ցոյց տուաւ Միաբանութեան առած իմաստուն որոշումը, եւ իրականին մէջ յաջորդ Պատրիարքը վերականգնեց Մայր Աթոռոյ հաստատման կերպը, ու պետական ճանաչման կողքին միշտ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վաւերացումն ալ տրուեցաւ որպէս հաստատում: Նաեւ անուղղակիօրէն բարեղէպ եղաւ աշխարհական տարրին գանցառումը այն իմաստով որ աշխարհականք բոլորովին դուրս մնացին Երուսաղէմի ներքին գործերէն միանգամ ընդմիշտ, եւ յետագային Պատրիարքարանը իր ներքին Կանոնադրութեամբ կառավարեց ինքզինքը:

Պետական բոլոր ձեւակերպութեանց աւարտին, Միաբանական ժողովը գումարուեցաւ 1931 Յունիս 8-ին, ուր անհրաժեշտ նկատեցին թեկնածու Թորգոմ Արքեպիսկոպոսի միաբանութեան անդամ ըլլալու պայմանը: Եւ քանի որ միաբանութեան մտքին մէջ կար ընտրելին, ժողովը հարկ նկատեց

զինք միաբան դարձնել նախ, եւ ապա ընտրելիներուն հնգանուն ցանկին անցընել իր անունը, որ իսկոյն կատարուեցաւ միաձայն քուէարկութեամբ:

Միաբանական Ընդհանուր Ժողովը իր յաջորդ նիստին, Յունիսի 15-ին, լսեց Թորգոմ Սրբազանի Յունիս 10 թուակիր հեռագիրը, եւ ապա կարդաց իր Յունիսի 11-ի նամակը որոնցմով ան իր ջերմ շնորհակալիքը կը յայտնէր եղած պատիւին համար «յանձն առնելով հաւատարմաբար ծառայելու Ս. Աթոռին՝ հնգանդելով միաբանական կանոններուն»: Նոյն նիստին ներկայ 40 միաբաններու քուէներով հնգանուն ցանկը կազմուեցաւ գլխաւորութեամբ Թորգոմ Արքեպս. Գուշակեանի, եւ յաջորդող 16-ի նիստին զինք Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ Պատրիարք ընտրեցին:

Եգիպտոսի իր թեմէն հրաժեշտ առնելով Թորգոմ Արքեպիսկոպոս գնացքով Երուսաղէմ ժամանեց 1931 թուի Նոյեմբեր 26-ին, Անգլիոյ Թագաւորական հրովարտակի ստացումէն ամիս մը ետք, ընկերակցութեամբ Սմբատ Եպս. Գազազեանի եւ Մամբրէ Ծ. Վրդ. Սիրունեանի, դիմաւորուելով Տեղապահ Մեսրոպ Եպս. Նշանեանէ, Կիլիկեան Աթոռի ներկայացուցիչ Պետրոս Արքեպս. Սարաճեանէ, Երուսաղէմի Մկրտիչ Աղաւունի եւ Մատթէոս Գայրզճեան եպիսկոպոսներէն եւ միաբանութեան ներկայացուցիչներէ:

## Թորգոմ Պատրիարք եւ Մայր Աթոռի «ԶԵԿՈՒՅՈՒՄ»ը

Ս. Էջմիածնէն խորէն Ա Մուրատէզեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1937 Սեպտեմբեր 1 թուակիր Կոնդակով «Զեկուցում» անունին տակ Հայ Եկեղեցւոյ Բարենորոգութեան վերաբերեալ ընդարձակ նախագիծ մը լղած էր Երուսաղէմի Հայոց Թորգոմ Պատրիարք Գուշակեանին: «Զեկուցում»ին հիմնական հարցերը երկու խումբերու վերածած էր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր մէկ յատուկ նիստին, դիմելով Թորգոմ Պատրիարքին քննարկել գանդնք եւ իր եզրակացութիւնը Մայր Աթոռ ներկայացնել: Իր ամբողջական անունով՝

«Զեկուցում Հայ Եկեղեցու Բարենորոգութեան Մասին» ծրագիրը կը զրկուէր Երուսաղէմի Թորգոմ Պատրիարքին որպէս խորէն Ա Կաթողիկոսի ներկայացուցիչը «ի սիւստ աշխարհի եւ ղեկավար գործոյս»: Պատրիարքը որպէս լրջախոս եւ պատասխանատու հոգեւորական, իր հմտութիւնն ու կարողութիւնը դէպի «Զեկուցում»ը դարձուց, եւ ՍԻՈՆ ամսագրի էջերուն մէջ լայն խմբագրականներու կուռ շարքով մը քննարկեց բոլոր հարցերը առանձինն անոնց բոլոր ծալքերով:

Ի պատիւ Թորգոմ Պատրիարքի պէտք է հաստատել որ ուրիշ ո՛չ մէկ հոգեւորական իրեն պարտք համարեց քննել եւ քննադատել, գնահատել կամ քաջալերել Մայր Աթոռի նախանձախնդրութիւնը այնպէս ինչպէս կատարեց Երուսաղէմի Պատրիարքը ամենայն աչալրջութեամբ եւ բարեխղճութեամբ, շատ աւելիով քան ինչ որ եպիսկոպոսական ժողով մը պիտի կարենար կատարել: Թորգոմ Պատրիարքի առաջին պարտքը եղաւ իր իսկ բառերով «հարցերուն մօտենալ վերին աստիճանի զգուշութեամբ, զգաստ հոգիով, լուրջ միջոցներով, երկխոյզութեամբ եւ իմաստութեամբ միանգամայն»:

«Զեկուցում»ի երկու խումբերը կը բովանդակէին հետեւեալ հարցերը:

Ա) Ծիսական արարողական, որոնց տակ կ'իջնային ժամակարգութիւնը, եկեղեցական տօները, եկեղեցական խորհուրդները, Մաշտոցի եւ ճաշոցի կրճատման հարցերը:

Բ) Ընդհանուր հարցեր, որոնց տակ կ'իջնային հոգեւորականներու պատրաստութիւնը, կուսակրօնութիւնը, ամուսնական հարցեր, պահքի վերացում որոշ պարագաներու, եւ պաշտամունքի լեզուն:

Յիշեալ հարցերը թէեւ «արտաքին յայտնութիւններն էին քրիստոնէական կրօնքին», այսուհանդերձ անոնց բարեփոխութիւնը, ըստ Գուշակեան Պատրիարքի, պատճառ պիտի դառնար վերածնունդ տալու մեր ժողովուրդին եւ հոգեպէս ստեղծելու նոր կեանք, քրիստոնէական նոր կենցաղ որպէս բարեկարգութեան բուն նպատակը:

Շարք էջ 19

# ՄԱՍԻՍ

## ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

### ԿԵԱՆՔԸ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ


Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի երկարաշունչ արձակուրդէն հազիւ վերադարձած՝ Մերտինեան վարժարանէն ներս դպրոցական կեանքը մտաւ իր բնականոն ընթացքին մէջ. Առօրեայ դասընթացներու կողքին սկսան տեղի ունենալիք ձեռնարկներու պատրաստութիւն, փորձեր, ինչպէս նաեւ նորերու ծրագրում:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Փետրուարը իր հետ բերաւ տարուան առաջին ազգային տօնը՝ Վարդանանց Հերոսամարտի յիշա-

տղիկները երգեցին «Նորահրաշ» շարականը:

Յայտագրի վերջին մասով ելոյթ ունեցաւ Դ. կարգը, որ ներկայացուց «Հաւատքի Զօրագունդը» ուր յատուկ ուշադրութիւն գրաւեցին Հայոց Մեծ Տիկինը, Վարդանն ու Ղեւոնդ Երէցը:

Հանդիսութիւնը փակեց վարժարանիս տնօրէն՝ պրն. Յովսէփ Ինճէճիքեան, որ անգամ մը եւս մատնանշեց Վարդանանց հաւատքի եւ հայրենասիրութեան գօրութիւնը, ապա գնահատեց յայտագրին բա-



տակումը, որ մեզ բոլորս կը ներշնչէ անմահ «Քաջ Վարդան»ի անսասան հաւատքով ու անսահման հայրենասիրական ոգիով: Մանկամտերի մէջ կը սորվին Վարդանի անունը, եւ մեծ հպարտութեամբ կ'ըսեն «Քաջ Վարդանի թոռն եմ ես», յաջորդող դասարաններուն

ժին բերող բոլոր աշակերտները եւ զայն պատրաստող ուսուցիչները:

Փետրուար 24, 2010ին Մերտինեան վարժարանը ունեցաւ նաեւ իր տարեկան Գիտական Յուլիանոսի սր Միջնակարգի 6, 7 եւ 8րդ դասարաններուն համար: Քանի մը ամիսներու վրայ երկարող այս



մէջ կը սորվին Վարդանի ու իր գինակիցներու պատմութիւնը եւ ապա, զայն պատկերներով կը ներկայացնեն բեմերու վրայ, ամէն մէկը դառնալով նոր «Վարդան»ներ, կը հասկնան «Վասն Հաւատքի, Վասն Հայրենեաց» խօսքին նշանակութիւնը եւ անոնց համար կատարուելիք գոհողութիւններն ու ծառայութիւնները:

Այս տարի, Վարդանանց տօնի պաշտօնական յիշատակումը տեղի ունեցաւ Փետրուար 11, 2010ի առաւօտեան ժամը 8:00ին, վարժարանիս հանդիսարանին մէջ: Պաշտամունքը առաջնորդեց, ինչպէս նաեւ օրուան պատգամը փոխանցեց Վեր. Ճէյլըն Մաթոսեանը: Օրուան յատուկ քանի մը երգերու խմբային կատարումէն ետք յայտագիրը բացուեցաւ աշակերտական բարի գալուստի խօսքով, ապա յաջորդաբար բեմ բարձրանալով պատասանեցին ու երգեցին Բ., Գ. եւ Ե. կարգի աշակերտները, Ը. կարգի

աշխատանքներուն ծրագրումն ու իրագործումը ի յայտ կը բերէր ապագայ գիտնականներու փայլուն խումբ մը: Անոնց աշխատանքները բժախնդրօրէն դատուեցան հիւր դատաւորներու կողմէ եւ հետեւեալ աշակերտները արժանացան Ա-Գ մրցանակներու եւ մասնաւոր յիշատակութեան:

2. կարգ -ա. Նարեկ Աթէօքէնեան, բ. Հրաչ Ասմէրեան, գ. Ալիս Կարապետեան, մասնաւոր յիշատակութեան արժանի Վազգէն Հաթիքեան: Է կարգ - ա. Բաֆֆի Զարիւրտեան, բ. Ռօզ Աւագեան, գ. Վարդան Արզումանեան, մասնաւոր յիշատակութեան արժանի Մայքըլ Սուլահեան: Ը. կարգ - ա. Արթին Գալստեան, բ. Սուրէն Գրիգորեան, գ. Անի Քէշիշեան, մասնաւոր յիշատակութեան արժանի Էնդի Տանայեան:

Մրցանակակիր աշակերտներէն ոմանք պիտի մասնակցին «Ամերիկայի Հայ երկրաչափնե-

### ՆՐԱ ԱՆՈՒՆԸ ԱՐԺԱՆԻ Է ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ

#### ԱՆԱՀԻՏ ԵՐԻՄԵԱՆ

Մի քանի շաբաթ առաջ էր, զանգահարեցին ընկերներս, երգիչ Արա Սահակեանը եւ բեմադրիչ-դերասան Սեդրակ Պրոնզեանը: Տեղեկացրին որ Փետրուարի 21ին համագալչիի փաստեանա մասնաճիւղը իր նորաբաց կենտրոնում, որը գտնուում է Ֆուլթիլ փողոցի վրայ տեղի է ունենալու մեր ընկերոջ մահուան յիշատակութեան տասնամեայ տարելիցը:

Երբ իմացայ, մէկիկ-մէկիկ թերթեցի անցեալի էջերը ու փորձեցի ձեւ ու դիմագիծ տալ մի մարդու, որ եղել է բնածին դերասան եւ ասմունքող, բնատուր շնորհներով օժտուած մի մարդ, մի հայ որի հետ բեմ եմ բարձրացել:

1996ին Համագալչի հայ կրթական եւ մշակութային միութեան Փաստինայի մասնաճիւղի Լեւոն Շանթ թատերախումբը կազմակերպել է Ռոսէ Ֆերտինանի «Երեք Մանչ, մէկ Աղջիկ» թատերգութիւնը, թարգմանութեամբ Ժորժ Սարգսեանի, բեմադրութիւնը՝ Սեդրակ Պրոնզեանի:

Բնաւորութեամբ ու խառնուածքով անկեղծ ու ուղղամիտ մարդու առաջինութիւնները դրսեւորուում են կեանքի բոլոր պայմաններում: Այսպիսի մարդը շուտ է ճանաչում, գտնում, ձեռք է բերում հաւատարիմ ընկերներ ու համախոհներ: Այդպիսին էր Յարուկեան, Յարուկեան դերասանը իր առանձին դիմագիծը ունէր իր սեփական մոտրակը: Բնաւորութեամբ յախուռն էր, անհաւասարակ շիտ ու ըմբոստ, որ իւրաքանչիւր է առհասարակ բոլոր արուեստագէտներին: Հոգին անհանգիստ լինելու պատճառով, յաճախ հակասական էր, որ նոյնպէս բնորոշ էր արուեստագէտի էութեանը:

Յարուկեան դերասան-ասմունքողի ճանապարհը շատ բարդ է եղել: Ինչո՞ւ, որովհետեւ ծնունդ էր սփիւռնուում, Պէյրութում: Յետեղեւեան ժամանակաշրջանին հասակ առած, ազգային ոգիով ներշնչուած 15 ամեաց պատանին նետուում է թատերական կեանքի մէջ: Թատերական կեանք՝ սփիւռնի դժուարին պայմաններում: Սփիւռնք որ մինչեւ այսօր պայքարում է յանուն արդարութեան, յանուն մեր մէկ ու կէս միլիոն անթաղ շիրիմներին, յանուն մեր Գրիգոր Զոհրապետներին ու Դանիէլ Վարուժաններին, Զարիֆեաններին ու Սեւակներին, յանուն մեր Տիկնիքի համար, յանուն մեր հայ

#### մնալու համար:

Աւտոմեքենայ չկայ: Աւտովթարից յետոյ մէկ ու կէս ամիս է մեքենայ չեմ վարում: Այդ օրուայ վարողը որդիս էր: Տասը տարի է չկայ իմ ընկերը, ձեր ընկերը, չկայ Յարուկեան Գաբրիէլեանը, բայց կան վկաներ ու վկայութիւններ:

«Ինչ անմեղութիւն, ինչ մաքրութիւն, ինչ ծաղիկներու առատութիւն, եւ ինչքան ինքզինքան մաքուր սիրոյ սրբութիւն...» Յովհաննէս Շիրազ, 1974թ

«Յարուկեան Գաբրիէլեանը այնքան հարազատօրէն ներկայացուց մեր եղբոր ներշախարհը, որ պահ մը կարծեցինք թէ ինքն էր, որ ուղղակի կը խօսէր իր հարազատներուն հետ» Լուսի Թոսպատ:

Այո, իմ ընկեր Յարուկեան, դու չէիր կարդում: Դու ապրեցնում էիր, ոգեշնչում, ազնուացնում ու սրբացնում էիր, ունկնդիրներին փոխանցում էիր բանաստեղծութեան այն հմայքը, որը գլուխ գործոցն է բոլոր արուեստների: Երբ դու կարդում էիր, դառնում էիր ոգեղէն, դառնում էիր հրեղէն ու անհպելի: Դու ոգու ու երագի ներշնչանքի ու մաքրութեան անսպառ աղբիւր էիր:

Քո յիշատակութեան օրուայ առթիւ գնահատուեցիր արժանաւոյնս: Տէր Խորէնը իր եկեղեցական արարողութիւնը կատարեց: Գնահատանքի խօսքերով հանդէս եկան Յովիկ Սալիպան, Ռաֆֆի Հարբոյեանը, Գրիգոր Սաթամեանը, Մարալ Նաշալեանը, Սեդրակ Պրոնզեանը, երգեց Արա Սահակեանը, նուագեց քանոնահար՝ Ալլան: Եօթ տարեկան Քրիստինան թոռնուհիդ յուզեց ներկաների հոգիները իմանալով, որ դու շատ հեռու ես ապրած նա չի ցանկանում որ քեզ նեղացնեն: Կազմակերպիչ մարմինն, ներկայ գտնուողներին շնորհակալւան խօսք ասած որդից Շահանը: Մի յուշ էլ ես պատմեցի:

Կինդ, տիկին Գոհարը անթարթ հայեացքով նայում էր լուսանկարիդ, մտաբերելով ձեր ապրած կեանքի ուղին: Մանկութեան ընկերդ Գօգո Սուքիասեանը հետաքրքիր յուշեր պատմեց քեզանից:

Եւ ես այդ օրը տուն վերադարձայ ինձ հետ տանելով 12 ամեայ ձօ Գաբրիէլեանի ասմունքը: Նրա Աստուծոյ կողմից շնորհուած բնատուր տաղանդը: Քարուքանդ արեց հոգիս: Արցունքոտուել էր անգամ իմ 23 ամեայ որդու՝ Հայկի աչքերը:

Թողը՝ ձոն պապին է քաշել:

րու եւ Գիտնականներու» ( AESA) կազմակերպութեան մրցոյթին՝ Մարտ 6, 2010, Նորթրիճի համալսարանին մէջ, ապա՝ Լոս Անճելըսի

Գիտական ցուցահանդէսին՝ Ապրիլ 14-16 Փաստինայի Convention Center-ի մէջ:

Յաջողութիւն բոլորին:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծանշանակներու եւ մանուկներու Քայրափութաբոյժի բաժնում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդադէմ եւ սկզբնային ցուցք:  
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատասխան  
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

1785 E. Washington Blvd.  
Pasadena, CA 91104  
(626) 794-7026  
Open Monday—Saturday  
9 am - 8 pm



825 W. Glenoaks Blvd.  
Glendale, CA 91202  
(818) 242-0683  
Open Monday—Saturday  
9 am - 8 pm

**EVERYDAY LOW PRICES**

 <p><b>GREY GOOSE</b> — VODKA —</p> <p><b>\$21<sup>99</sup></b></p>	 <p><b>JOHNNIE WALKER</b> BLACK LABEL</p> <p><b>\$18<sup>99</sup></b></p>	 <p><b>STOLICHNAYA</b> RUSSIAN VODKA 1.75L</p> <p><b>\$18<sup>99</sup></b></p>
 <p><b>SKYY</b> VODKA</p> <p><b>\$9<sup>49</sup></b></p>	 <p><b>RUSSIAN STANDARD</b> VODKA</p> <p><b>\$10<sup>99</sup></b></p>	 <p><b>DOUBLE WHITE</b> PREMIUM VODKA</p> <p><b>\$8<sup>99</sup></b></p>
 <p><i>milagro</i> SILVER TEQUILA</p> <p><b>\$12<sup>99</sup></b></p>	 <p><b>PATRÓN</b> SILVER TEQUILA</p> <p><b>\$29<sup>99</sup></b></p>	 <p><b>Jose Cuervo</b> TEQUILA ESPECIAL</p> <p><b>\$9<sup>99</sup></b></p>
 <p><b>X RATED</b> FUSION LIQUEUR</p> <p><b>\$14<sup>99</sup></b></p>	 <p><b>ORA</b> VODKA</p> <p><b>\$12<sup>99</sup></b></p>	 <p><i>El Ancho Reyes</i> ARAK</p> <p><b>\$21<sup>99</sup></b></p>
 <p><b>RÉMY MARTIN</b> VSOP COGNAC</p> <p><b>\$29<sup>99</sup></b></p>	 <p><b>Hennessy</b> VS COGNAC</p> <p><b>\$20<sup>99</sup></b></p>	 <p><b>COURVOISIER</b> VSOP COGNAC</p> <p><b>\$16<sup>99</sup></b></p>
 <p><b>ROBERT MONDAVI</b> PRIVATE SELECTION ASSORTED VARIETALS</p> <p><b>\$6<sup>99</sup></b></p>	 <p><b>MANE</b> VSOP 5 YRS ARMENIAN BRANDY</p> <p><b>\$19<sup>99</sup></b></p>	 <p><b>NOY</b> 10 YRS ARMENIAN BRANDY</p> <p><b>\$31<sup>99</sup></b></p>

**Unbeatable Prices! Huge Selection!**

\*This ad expires on 03/21/10 • 12 or more bottles Mix & Match • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CCs • All items are 750ml in size unless specified.

# ՓՈՒՍԱՆ ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ ԿԱԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

«Կեանքի յուշեր»։ Այսպէս է խորագրել թեհրանում լոյս տեսած իր գիրքը Մեծ Եղեռնի ականատեսներից մէկը Տ. Յարուժիւն Տէր Մեսրոպեանը։ Ճշմարտապատում այս գրքում ընթերցողը գտնում է յուզիչ պատմութիւնը մի հայի, որ թրքական եսթաղանից մագապուրծ հագարաւոր բախտակիցների հետ թողնելով հարազատ հողը, հայրենական յարկը, ստիպուած էր ապաստան փնտռել օտար երկիրներին տակ։

Տէր Մեսրոպեանի գիրքը սոսկ յուշագրութիւն չէ։ Անդարձ կորստից փրկելու մտահոգութեամբ հեղինակը թղթին է յանձնել ոչ միայն իր կեանքի յուշերը, այլև այն ամէնը ինչ գիտէ, ինչ յաջողուել է հաւաքել ու պահպանել իր բնօրրանի պատմութեան, աշխարհագրութեան, բնակիչների զբաղմունքի, կեանքի ու կենցաղի սովորոյթների, բառ ու բանի վերաբերեալ։

Հեղինակը ծննդավայրը վասպուրական նահանգի Թիմար գաւառն է, տիպիկ հայկական բնապատկերով մի անկիւն, որի բնակիչներն ապրում էին միայն խաղաղ աշխատանքի երազանքով, որը սկսւոյն, այնպէս բրտօրէն փշրուեց թուրք ցեղասպանների ձեռքով, դատարկուեցին գիւղերը, ամայացան դաշտերը, երբեմնի չէն օձախները վերածուեցին մոխրակոյտերի։ Հեղինակը չի մոռացել տալ Թիմար գաւառի քարտէզը, գիւղերի ցուցակը, բնակչութեան թիւը։

Իր մօր եւ այլ ականատեսների պատմածների հիման վրայ, Տէր Մեսրոպեանը վերարտադրում է 1895-96 թուականների հայկական կոտորածների պատկերը վասպուրականում։ Հեղինակը ցոյց է տուել, որ վասպուրականի խաղաղ շինականները, երբ հարկը պահանջում էր, գիտէին քաջաբար կռուել, զէնքով պաշտպանել իրենց օձախն ու պատիւը։ Թիմար գաւառի եւ միւս շրջանների շատ երիտասարդներ թոհուբոհի օրերին գինուած դիմազրաւում են թուրք ջարդարարներին։ Սակայն որքան էլ նրանք անձուռիորաբար մարտնչեցին, այնուամենայնիւ անկարող եղան կանխել թշնամու վայրագութիւնները, թրքական մեծաթիւ ուժերի դէմ, մղուած անհաւասար

կռոււմ քաջաբար ընկան շատ շատերը։ Սակայն մեծ արհաւիրքը դեռ առջեւում էր։ Մեծ Եղեռնի ականատեսը լինելով՝ հեղինակը սարսուռով է վերապրում իր ժողովրդին պատուհասած դէպքերի ողջ անաւորութիւնը, ճշմարտացի վերապրում է հայ գողգոթան։ Վասպուրականցիները նախագալով, թէ ինչպիսի ոճիր է նիւթուած թրքական իշխանութիւնների կողմից վճռում են նորից զէնք առնել։ Հայրենասիրական խանդավառութիւնը համակում է ամէնքին։

Ինքնապաշտպանութեան նախապատրաստութեանը մասնակցում են ամէնքը, ծեր ու պատանի, կանայք ու աղջիկներ։ Հայ երիտասարդները, արհամահրելով մահուան վտանգը, զէնք են հայթայթում եւ գաղտնաբար տեղափոխում այն վայրերը, որտեղ գուժարուելու էին վասպուրականցիների ջոկատները։ Հեղինակը հպարտութեան զգացումով է պատկերում Լիմ անապատում, Արճակ, Խառկոնիս, Այլուր եւ այլ գիւղերի մօտ տեղի ունեցաւ ինքնապաշտպանութեան մարտերը, որտեղ վասպուրականցիները խիզախութեան շատ օրինակներ են ցոյց տալիս։ Այդ մարտերի շնորհիւ է միայն, որ յաջողուած է խոշտանգումից եւ անարգումից փրկել շատ հայ ընտանիքների, կանանց ու երեխաների։ Յուշագրութեան հեղինակն այնուհետեւ պատմում է եղեռնից փրկուած իր հայրենակիցների, սեփական օձախից վտարուած տասնեակ հազարաւոր հայ տարագիրների յետագայ կեանքի դէպքերը։ Նրանց մի մասը ապահով հանգրուան գտաւ Սովետական Հաստատում, դառնալով իր պետականութիւնը վերագտած հայրենի երկրի վերաշինութեան մեծ գործի մասնակիցը։ Միւսներին սպասում էր պանդուխտ հայի անհաստատ կեանքը օտար ափերում։

Իբրեւ գրքի յաւելուած հեղինակը ներկայացրել է վասպուրական նահանգի եւ Թիմար գաւառի ժողովրդական հեքիաթների, երգերի նմուշները։

Տ. Յարուժիւն Տէր Մեսրոպեանի «Կեանքի յուշեր» գիրքը հետաքրքրութիւն է ներկայացնում ոչ միայն ընթերցողների լայն շրջանի, այլև պատմաբանի, բանասէրի, ազգագրագէտի համար։

## ՀԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հացը մեր բոլորին կեանքին կեդրոնը կը գտնուի։ Ան միշտ ալ այս ձեւով մաս կազմած է մարդկութեան պատմութեան։ Հացը յայտնաբերուած է քարայրներու մարդոց օրերուն, դարեր ապրած է եւ մինչեւ այսօր մեր սեղանին մաս կը կազմէ։

Հացը շինուած է պարզապէս ալիւրով եւ ջուրով. Հակառակ ասոր՝ ան մեր սնունդին գլխաւոր սիւներէն մէկն է։ Հակառակ այս պարզութեան՝ ան երկար պատրաստութեան կարօտող նիւթ մըն է։

Նախ պէտք է ցորենը աճեցնել, հնձել եւ հատիկը հանել. ապա այդ հատիկները աղալ՝ ալիւր պատրաստելու համար։ Ապա այդ ալիւրը ջուրով խառնել՝ խմոր ստանալու համար, այդ խմորը շաղել, փուռին մէջ եփել... Պատահական չէ, որ հացագործը կը համարուի պատմութեան առաջին ճարտարագէտը։ Հացը ստեղծելով՝ մարդ արարածը ստեղծած է նաեւ աշխատանքը, յառաջդիմութիւնը։ Ան այլեւս չի բաւարարուիր բնութեան նիւթերը իրենց հում վիճակին մէջ սպառելով, ինչպէս հին ժամանակներուն իր նախահայրերը կ'որսալին, ձկնորսութիւն կ'ընէին կամ պտուղներ կը հաւաքէին... Իսկ հետագային երբ մարդ արարածը կը հնարէ ջաղացքը, որ նախ կը գործածէ ստրուկներուն եւ անասուններուն ուժը, եւ ապա ջուրին եւ հովին, ան կը փաստէ իր հանճարեղութիւնը, բան մը, որ զինք կը զանազանէ միւս կենդանի էակներէն։ անասունները ճաշ չեն պատրաստեր։

### ԽՄՈՐԸ, ՈՐ Կ'ՈՒՌԻ...

Մեզի ծանօթ մտտ եւ գիրուկ հացիկը խմորումի մը արդիւնքն է. մանր սունկերու ազդեցութեան տակ խմորը բնածխական կազմով կ'ուռի, նախ հանգիստ վիճակին մէջ եւ ապա եփելու ընթացքին։ Առաջին գրութիւնը, որ կը լիչէ այս հնարքը,

## ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Լաւ եւ սննդարար ուտելիքը մեր առողջութեան նպաստող լաւագոյն միջոցն է։ Իւրաքանչիւր պատու, որ մեր բերանը կը դնենք, մեզի կը պարզեւէ լաւ կամ վատ իրավիճակ։ Բոլորս ալ գիտենք, թէ մեր ուրախ ըլլալն անգամ կախեալ է մեր առողջութենէն։ Երբ լաւ կ'ուտենք, առողջ կ'ապրինք։ Այս թիւով կը ներկայացնենք կարգ մը ուտելիքներ, որոնք նոյնիսկ կարգ մը անհանգստութիւններ կանխարգիլելու եւ մեզի աւելի առողջ վիճակի մէջ պահելու հնարաւորութիւն ունին։ Այսպէս՝

1. Գլխացաւ։ Անոնք, որոնք կը տառապին գլխացաւէ, կը թելադրուի իրենց ձուկ ուտել։ Ձուկը հարուստ է ձկանիւղով, որ հիմնականօրէն կրնայ կանխարգիլել գլխացաւը։
2. Բարձր ջերմութիւն։ Բարձր ջերմութիւն ունենալու պարագային, պէտք է առատ մածուն ուտել։
3. Առատ թէյ խմելը կը նպաստէ կաթուածը կանխարգիլելու։ Թէյ խմելը լաւագոյն միջոցներէն մէկը կը համարուի երակներու մէջ իւղի կուտակումները կանխարգիլելու։ Նաեւ թէյ խմելը որոշ չափով կուշտ կը պահէ մեզ։ Յատկապէս կանաչ թէյի պարագային, որ կը նպաստէ մարմնի դիմադրողական համակարգի զարգացման ու հզօրացման։

մեզի հասած է եգիպտացիներէն, 2300 տարիներ առաջ։ Հաւանաբար մէկը իր խմորը «մոռցեր էր» գայն եփելէ առաջ։ Եգիպտացիներուն գործածած Նեղոս ջուրը խմորում յառաջացնող մասնիկներ կը պարունակէ։ այդ ժամանակներէն ի վեր խոհագիրը բաւական ճամբայ կտրած է։ Յոյները գայն ներածած են, հռոմէացիները գայն փոխ առած են յոյներէն...։

### ԿԱՐԵՒՈՐ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Ք. Ա. 1200 թ.։ Նախապատմական շրջանին մարդ արարածը կ'անդրադառնայ, թէ կարելի է բոյսերը քաղել եւ յատկապէս հացահատիկները։ Ան նախ ջուրով եւ ալիւրով խիւսեր կը շինէ, ապա մոխիրին մէջ եփած շօթեր։

Ք. Ա. 2300 թ.։ Եգիպտացիները կը հասնին առաջին կարգին։ Փ ա Ր ա լ ո ը ն ն ե Ր ո լ օրերուն հացահատիկները մշակուին Նեղոսի ափերուն։ Հոն է, որ առաջին ուռած հացերը կը յայտնուին։

Միջին դարերուն։ Մարդիկ կը զարգացնեն ջրաղացները եւ կը շինեն հովով բանող ջրաղացներ ցորենը աղալու համար։ Վերջապէս, հացը կը սկսի կշիռով ծախուիլ, բան մը, որ աւելի արդար է։

### ՀԱՅԸ՝ ՄՆՈՒՆԴԻ ՀԱՄԱՊԱՏԱՍ ԽԱՆ

Երկար ժամանակի ընթացքին հացը բաժնած է հարուստները աղքատներէն։ Միսը համատեսելու համար Միջին դարերու հարուստները հացի կտոր մը կը գործածէին իբրեւ պնակ։ Երբ ան կը ծծէր միսին հիւթը, ան կը նետուէր թշուառներուն, որոնք շատ ուրախ կ'ըլլային։ Ժողովուրդին միակ մտահոգութիւնը օրական հացը ապահովելն էր։ Պատմութեան ընթացքին հացը շատ շուտ համապատասխան եղած է մարդկային սնունդի։

Տարբեր էջ 18

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ՄՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ։

*Մանրամասների համար հեռաձայնել՝*  
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Տարբեր էջ 18

### ՅՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ՝ ՆԱԵՒ ԳՈՐԾԻՉ

Շարունակում է 7-էն

սրամիտ կերպով էր ասում այդ խօսքը, որ մենք էլ նրա հովին էինք ընկնում եւ սկսում հարցը կատակի տալ»։ (9) Ըստ երեւոյթին՝ Պաքու գտնուած միջոցին Յ. Թումանեան կը նուիրուի միայն «Օճախ»-ի երեկոյեան հաւաքներուն. բան մը, ու ինքնաբերաբար կը բարձրացնէ «Օճախ»-ին հեղինակութիւնը։ «Օճախ»-ի դրական գործերէն մին կ'ըլլայ նաեւ այն, որ վերջիններուն ջանքերուն շնորհիւ՝ Պաքուի Հայոց մարդասիրական ընկերութիւնը 1897-էն սկսեալ թոշակ կը յատկացնէ «Օճախի պատուաւոր անդամներ» Ղ. Աղայեանին, Յ. Թումանեանին եւ Շիրվանզադէին։

Յ. Թումանեանի կուսակցական յաջորդ առաքելութիւնը կ'ըլ-

կամեցել Թումանեանի, ինչպէս եւ իր, հնչակեանների հետ գործակցելու փաստը յիշատակել»։ (11)

1897-ին ցարական իշխանութեան կողմէ հայկական դպրոցներու փակման որոշումին պատճառով, ինքնաբերաբար կը վերանայ նաեւ «Օճախ»-ը։ Այս կապակցութեամբ «Օճախ»-ի անդամներուն չլրացած իր նամակին մէջ Յ. Թումանեան կը գրէ.

«Աստձու խաթեր, «Օճախը» չքանդել»։ (12)

Հայկական դպրոցներու հանդէպ ցարիզմի հալածանքներուն որպէս հակազդեցութիւն՝ 1898-1902 թիֆլիսի մէջ կը գործ է «Ծիածան» աշակերտական միութիւնը։ Հնչակեան հովանաւորութիւնը վախճելով պատանեկան միութեան նպատակն էր աշակերտութեան մօտ

ածան» կ'ունենայ նաեւ իր ձեռագիր թերթը՝ «Ընկեր»։ Մեծ բանաստեղծը պատանեկան եռանդով կը կապուի «Ընկեր»-ին ու կը հետեւի անոր բովանդակութեան։

Հասարակական իր գործունէութեան ընթացքին կուսակցական ինչ պաշտօններ վարած է Յ. Թումանեան, կամ ինչ պաշտօններ առաջարկուած են անոր։ Այս մասին եւս կան տարտամ յուշեր՝ ցրուած հոս ու հոն։

1898-ին Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը կը դիմագրուէ ներքին տագնապնէր։ «Հնչակ» որոշ շրջան մը կը դադրի լոյս տեսնելէ։

Հնչակեան կուսակցութեան Պաքուի մասնաճիւղը կը լիազօր է Գրիգոր Վարդանեանը, որ հանդիպի Յ. Թումանեանի հետ եւ առաջարկէ անոր անդամակցութիւնը կուսակցութեան կեդրոնական վարչութեան, ինչպէս նաեւ «Հնչակ»-ի խմբագրապետութեանը։ Այս հանդիպումը տեղի կ'ունենայ 1898 Յունիսին թիֆլիսի մէջ։ Յ. Թումանեան երբ կը լսէ եղած առաջարկութիւնը, իր հիւսնուրով նախ կը պատասխանէ. «Լոնտոնը ոչ Լոռի է, ոչ էլ Սասուն կամ Զեյթուն, ես ինչ գործ ունեմ հետեղ». սակայն աւելի ետք կու տայ իր համամտութիւնը։ Հանդիպումէն ետք Յ. Թումանեան կը վերաքննէ իր պատասխանը, կը հրաժարի եղած առաջարկէն ու Պաքուի Հնչակեան մասնաճիւղին կը հեռագրէ. «Շատ եմ ցաւում, որ

ինձնից միանգամայն անկախ պատճառներով չպիտի կարողանամ ձեր կանտորի առաջարկն ընդունել. ներեցէք։ Յովհաննէս»։ (15)

1903-ին, թիֆլիսի հնչակեան մասնաճիւղի վերաշխուժացման համար տարուող աշխատանքներու ծիրէն ներս, վարչութեան կողմէ կ'որոշուի հանդիպումներ ունենալ կուսակցական անցեալ ունեցող մտաւորականներու հետ։ Այս կապակցութեամբ վահան Մարսեան կը գրէ. «Մեր երկրորդ այցելութիւնը եղաւ վիպասան Շիրվանզադէին, որը բանաստեղծ Յովհ. Թումանեանցի հետ ժամանակին եղել էր թիֆլիսի Հնչակեան վարչութեան անդամ եւ փրոփակախոս»։ (16) Այն որ Շիրվանզադէն եղած է թիֆլիսի վարչութեան անդամ, տարակոյս չկայ. բայց թէ Յ. Թումանեանը եւս միեւնոյն շրջանին եղած է վարչութեան անդամ, այստեղ հաւանաբար յիշողութիւնը դաւաճանած է Վ. Մարսեանին, որ Ղ. Աղայեանը շփոթած է Յովհ. Թումանեանի հետ։

\*\*\*

Յովհաննէս Թումանեան մինչեւ իր կեանքին վերջը սերտօրէն կապուած կը մնայ հայ ազգային-հասարակական կեանքին ու իր մասնակցութիւնը կը բերէ հայ ժողովուրդին առջեւ ծառայած հարցերու լուծման, որոնք դժբախտաբար շատ էին ու ցաւալի։ Ան այսօր իր ծնած ժողովուրդին կը ներկայանայ՝ որպէս մեծ բանաստեղծ, մեծ մարդ եւ մեծ հայրենասէր։

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Վարդան Գոլոշեան (1867-1889) այն հայրենասէր երիտասարդներէն էր, որ տեսական բնոյթի յեղափոխական գործունէութեան ղուրբ գալով՝ կը դիմէ գործնական ֆայլի։ Յեղափոխական գործունէութիւնը ծաւալելու համար 1883-ին ան կը ձգէ Մոսկուայի Լազարեան ձեմարանի իր ուսանողական նստարանը ու կը մեկնի «Երկիր»՝ Արեւմտահայաստան։ Կը վերադառնայ թիֆլիս։ Դէպի «Երկիր» զինեալ խումբով մը մուտք գործելու անոր երկրորդ փորձը կը ձախողի։ 1889-ին Սալմաստէն վան մեկնելու նամակը վրայ խումբը կոտորի կը բռնուի թրքական զօրքին հետ, ուր Վ. Գոլոշեան իր երկու ընկերներուն՝ Յովհաննէս Ագրիպասեանի եւ Կարապետ Գուլակազեանի հետ կը նահատակուի։
2. «Թումանեանը ժամանակակիցների Յուշերում» (յետայս ԹԺՅ), Երեւան, 1969, էջ 228-229
3. Մելիք Ասիլբէկեան (Մոզպետ, Մոզ.), (1866-1940)։ Հնչակեան կուսակցութեան առաջին սերունդի ամէնէն վաղ ներկայացուցիչներէն մին։ Ծնած է Իջեւան։ Աւարտած է թիֆլիսի Ներսիսեանը։ Յեղափոխական գործունէութիւնը կը ծաւալէ Արեւմտահայաստանի, Պարսկաստանի եւ Անդրկովկասի զանազան ֆաղաֆներու մէջ։ 1897-ին՝ որպէս Հնչակեան «Շանթ» խումբի ղեկավար, Սալմաստէն կը մեկնի վան։ Չամբան, սակայն, խումբը կոտորի կը բռնուի Բիւրս ցեղախումբերու հետ եւ զոհեր տալէ ետք կը ստիպուի վերադառնալ։
4. ԹԺՅ, էջ 329։
5. Արամ Ինճիկեան, «Յովհաննէս Թումանեան», Երեւան, 1969, էջ 369։
6. ԹԺՅ, էջ 366։
7. Սիմոն Հովիտեան (Ս. Տաշիր), (1869, Լոռիի շրջանի Արդուի գիւղ-1942, Երեւան)։ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան յայտնի դէմքերէն։ 1887-ին կ'աւարտէ թիֆլիսի Ներսիսեանը եւ ուսումը կը շարունակէ Էջմիածնի Գեորգեան ձեմարանին մէջ։ Կ'աշխատակցի «Նոր Դար»-ին։ 1892-98 ուսուցչութիւն կ'ընէ Պաքուի մէջ։ 1898-ին կը մեկնի Եւրոպա եւ ընդհատուածներով կ'ուսանի Լայպցիգի եւ Հալեյի համալսարաններուն մէջ ու կը վկայուի ֆիլիսոփայութեան տոքթորի աստիճանով։ Կ'աշխատակցի «Հնչակ»-ին։ 1909-ին կը վերադառնայ թիֆլիս ու տարբեր աշխատանքներ կը գտնէ Ախալցխայի, Պաքուի եւ Էջմիածնի մէջ։ 1915-ին կը մասնակցի կամաւորագրութեան աշխատանքներուն։ 1903-1905 եւ 1916-1924 կ'ըլլայ Ս. Դ. Հ. Կեդրոնական վարչութեան անդամ։ 1916-ին մաս կը կազմէ «Գաղափար» թերթի խմբագրութեան, իսկ 1919-ին կը խմբագրէ «Գործաւոր» թերթը (Երկուրէն ալ թիֆլիս, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան հրատարակութիւնները)։ 1935-38 կ'աշխատակցի «Հնչակ»-ին։ Ունի գրական թարգմանութիւններ։
8. ԹԺՅ, էջ 261։
9. Ա. Ինճիկեան, էջ 378։
10. Լուսիկ Կարապետեան, «Թումանեանը ժամանակակիցների Յուշերում», «Գրականագիտական եւ Բանասիրական Ուսումնասիրութիւններ», Երեւան, 2004, էջ 30։
11. Առյուծ։
12. Ա. Ինճիկեան, էջ 385։
13. «Վահան Տէրեան», Երկերու ժողովածու, Հ. 1, Կ. Պոլիս, 1924, Պ. Մակիցեանի յառաջաբանը, էջ XIV։
14. ԹԺՅ, էջ 172։
15. Լուսիկ Կարապետեան, էջ 32։
16. Վահան Մարսեան, «Կովկասեան վերլուծումներ», «Յիսնամեակ Սոց. Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան», Փրովիտենս, 1938, էջ 211։



Էջմիածին 1908: Զախէն աջ՝ Գեորգ Պաչինտմադեան, Կոմիտաս Վարդապետ, Ղազարոս Աղայեան, Վահրամ Փափագեան, Յովհաննէս Թումանեան, Արշակ Զօպանեան եւ Աւետիք Իսահակեան

լայ միեւնոյն տարին՝ 1895-ին։ Ան նախ կ'ընտրուի Արեւմտահայաստանի կոտորածներէն փախուստ տուած զաղթականներու օգնութեան համար «Հանգանակող եւ գործադրող կոմիտէի» անդամ։ Նոյն թուին Նոյնեմբերին ան կը կատարէ կուսակցական յանձնառութիւն մը, որուն բոլոր ծախքերը ցարդ կը մնան չբացայայտուած։ Յ. Թումանեան կը նախաձեռնէ երկար ուղեւորութեան մը՝ Պորժոմ-Ախալցխա-Ախալքալաք-Աղեքսանդրապոլ-Կարս-Աղեքսանդրապոլ-Ղարաբաղ-Դիլիջան-Երեւան-Էջմիածին ուղեգիծով։ Շատ մը վկայութիւններ կը խօսին այդ ճամբորդութեան կուսակցական բնոյթին մասին։ «Ախալքալաքում Թումանեանը իջեւանում է ընկերոջ՝ Զալալ Տէր-Գրիգորեանի տանը, նոյն օրը երեկոյեան այստեղ ժողովի են հաւաքուած տեղի բոլոր նշանաւոր դէմքերը, որոնք Հնչակեան կուսակցութեան անդամ էին։ Տանտէրը չի մասնակցում ժողովին՝ կուսակցութեան անդամ չլինելու պատճառով, բայց յիշում է, որ բանաստեղծը եկել էր Ախալքալաք Հնչակեան կոմիտէ ստեղծելու նպատակով։ Յաջորդ օրը, ի պատիւ բանաստեղծին, ճաշկերոյթ է կազմակերպուած Ստեփան Վարդանեանը, որի որդին յայտնի Հնչակեան Խաչիկ Վարդանեանն էր»։ (10) Աղեքսանդրապոլի մէջ Թումանեանը կ'իջեւանի Աւետիք Իսահակեանի տունը, որ նոյնպէս անդամ էր Հնչակեան կուսակցութեան։

«Ըստ երեւոյթին՝ այստեղ էլ Թումանեանը գործել է, ունենալով Հնչակեան կուսակցութեան յանձնարարութիւնը, Իսահակեանը, պարզապէս, հասկնալի պատճառով, չի

վառ պահել հայրենասիրական ոգին եւ անոնց մէջ զարգացնել հայոց լեզուի, պատմութեան եւ գրականութեան գիտելիքները։ Ժամանակակիցներէն Պօղոս Մակիցեան կը գրէ, թէ «Ծիածան»-ի հանդիպումներուն «Ամենահրատապ խնդիրը, որ ծեծուած էր այդ միջավայրում, հայկական հարցն էր, տաճկահայերի դատն ու յեղափոխական շարժումը»։ (13)

Իր գործունէութեան հինգ տարիներու ընթացքին «Ծիածան»-ի անդամներուն թիւը կը տատանի 200-500 միջեւ։

Անոր առաջին ատենապետը կ'ըլլայ Ստեփան Շահումեան, որուն իբրեւ ուսանող Ռիկա մեկնումէն ետք այդ պաշտօնը կը կատարէ Արամ Տէր-Գրիգորեան (Վահան Տէրեանի եղբայրը)։

«Ծիածան»-ի շուրջ համախմբուած աշակերտութիւնը կը բաժնուի խմբակներու եւ հասարակական գործիչի մը կամ մտաւորականի մը հսկողութեան տակ կ'ունենան ուսումնական հաւաքներ։ «Ծիածան»-ի անդամներէն Մարգար Աւետիսեան կը վկայէ թէ. «Ընկերութիւնը գաղտնի էր, գաղտնի էին տեղի ունենում նաեւ պարպունքներն ու ընդհանուր ժողովները, այնպէս որ թէ՛ դասախօսութիւն կարգալը եւ թէ՛ ընդհանուր ժողովներին ներկայ լինելը ուսի էր պահանջում, ուստի մեր ինդելիկներ, պատրաստուած ուժերից շատերն էին խուսափում մեզանից»։ (14)

«Ծիածան»-ի «մայր խումբ»-ին հետ սիրայօժար պարապմունքներ կ'ունենայ Յովհաննէս Թումանեան։ Հաւաքները տեղի կ'ունենան Թումանեանի տան մէջ։ «Ծի-

**ՄԱՐՁԱԿԱՆ**

**ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԻՐԼԱՆՏԱ - ՅԱՅԱՍՏԱՆ՝ 1-2**

Հայաստանի երիտասարդական հաւաքականը Եւրոպայի 2011 թ. առաջնութեան ընտրական հերթական խաղում հիւրընկալուելիս 2:1 հաշուով յաղթեց Իրլանտայի այդ տարիքային խումբին:



Ինչպէս տեղեկացնում է belfast telegraph թերթը, դաշտի տէրերի գլխաւոր մարզիչ Դոն Գիլվենսը Երեւանում տեղի ունեցած հանդիպման համեմատ 6 նոր խաղացողներ էր ընդգրկել խումբի մեկնարկային կազմում, այդ թւում Անգլիայի առաջին լիգայում հանդէս եկող Սիմուս Կոուլմանին եւ Օուէն Գարվանին:

Իրլանտացիները բաւական ակտիւ են սկսել խաղը՝ ցանկանալով արագ կոլ խփել, սակայն դա նրանց չի յաջողուել: Առաջին խաղակէսի աւարտից 11 րոպէ առաջ Լեոն Հայրապետեանի դիպուկ հարուածից յետոյ գնդակը յայտնուել է դաշտի տէրերի դարպասում, իսկ քիչ անց Գէորգ Ղազարեանը ամրապնդել է հաշիւը՝ 2:0:

Երկրորդ խաղակէսը չնայած կրկին անցել է դաշտի տէրերի գրոհների ներքոյ, սակայն նրանք կարողացել են ընդամէնը կրճատել հաշուի տարբերութիւնը: 80-րդ րոպէին աչքի է ընկել Եան Դէյլին: Նշենք, որ հանդիպման 78-րդ րոպէից սկսած մեր խումբը մնացել է 10 հոգով, քանի որ երկրորդ դեղին քարտ ստանալու համար դաշտից հեռացուել է Մասիս Ոսկանեանը:

Չնայած այս կարեւոր յաղթանակին, մեր երիտասարդական հաւաքականն ընթանում է մրցաշարային աղիւսակի նախավերջին հորիզոնականում:

1. Շուեյցարիա	7	5	1	1	14-6	16
2. Թուրքիա	6	3	1	2	10-9	10
3. Էսթոնիա	7	2	3	2	6-8	9
4. Վրաստան	6	2	2	2	8-5	8
5. Հայաստան	7	2	1	4	11-14	7
6. Իրլանտա	7	0	4	3	6-13	4

**ՎԻՔ ԴԱՐՉԻՆԵԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ Է ԱՆՈՅԵԱՆԻ ԻՐ ԿՈՉՈՒՄԸ**

Հայաստանի բռնցքամարտիկ, WBO եւ WBA բռնցքամարտի միջազգային ֆեդերացիաների վարկածով թեթեւ քաշային կարգում աշխարհի ախոյեան Վախթանգ (Վ.Բ) Դարչինեանը հերթական անգամ պաշտպանել է իր ախոյեանի տիտղոսը ԱՄՆ-ում կայացած մրցամարտում՝ 3:0 հաշվով (118:110, 117:111, 120:107) յաղթելով մեքսիքացի Ռոդրիգո Գերրոյին:



Տիտղոսների հերթական պաշտպանութիւնից յետոյ Վախթանգ Դարչինեանը մտադիր է մարտահրաւէր դրկել ֆիլիպինցի Նոնիտո Դոնեթին, որի հետ մենամարտում նոկաուտի էր ենթարկուել 2007 թուականին կայացած մրցամարտում: Մեկնաբանելով իր նախատեսուող մրցամարտ-ուեւանը Վ. Դարչինեանը ասել է, որ Ն.Դոնեթը վախենում է իրենից:

**ՀԱՅԻ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ**

Շարունակուած էջ 16-էն

Քաղաքակրթութիւններու սկզբնական բազմաթիւ դրութիւններուն մէջ հաց եւ ուտելիք հաւասար եւ փոխի ի փոխ գործածուող իմաստ ունին: «Մեր ամէնօրեայ հացը» կը խորհրդանշէ մեր բոլորին՝ մարդկութեան ուտելիքը...

**ՈՍԿԻԻ ԶԱՓ ԹԱՆԿԱԳԻՆ ՅՈՐԵՆԸ**

Բոլոր մեծ քաղաքակրթութիւնները զարգացած են հացահատիկի մը շուրջ. բրինձը Չինաստանի մէջ, եգիպտացորենը Հարաւային Ամերիկայի մէջ, միրը Ափրիկէի մէջ...

Յորենը կը մշակուի բարեխառն շրջաններուն մէջ: Ներկայիս գլխաւոր արտադրող երկիրը Չինաստանն է: Յորենը աշխարհի ամենէն շատ փոխանակուած հիմնական նիւթերէն մէկն է: Անոր ապագան ալ փայլուն է, եթէ աշխարհի բնակչութիւնը 9 միլիարտի համար 2050ին, հաւանաբար պէտք պիտի ըլլայ հացահատիկներու արտադրութիւնը կրկնապատկել:

12. Հազացորդները կրնան դիմել ձեր խորհուրդին: Պաղ օդին, փոխանակ հազալու կարմիր կծու պղպեղ օգտագործեցէք: Պղպեղը իր բուժիչ յատկութիւններուն պատճառով նաեւ կ'օգտագործուի հագի բոլոր դեղերուն մէջ ընդհանրապէս:

**ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ**

Շարունակուած էջ 16-էն

10. Յիշողութեան եւ սուր միտք ունենալու համար, օգտագործեցէք ոստրէները (oyster) ձեր աննդականոնին մէջ: Հիմնականին մէջ «գինք» նիւթն է, որ շատ կարեւոր է ուղեղի աշխատանքին եւ յիշողութեան համար:

11. Պաղին դիմանալու դժուարութիւն ունիս, ուրեմն սխտոր կեր: Անշուշտ իր հոտով այնքան ալ բաղձալի չէ այս մէկը, սակայն իր պարունակած նիւթերով եւ աննդարար յատկութիւններով նախանձեղի է: Մինչեւ իսկ մարմինը պաղ եղանակին վարժ պահելու համար սխտորը իր ներգործութիւնը ունի:

13. Կուրծքի քաղցկեղ: Անոնք որոնք կը տառապին անկէ եւ կամ նախապէս հասած են այս վիճակին, պէտք ունին հացահատիկներու, ցորենի եւ նաեւ բանջարեղէններէն կաղամբի:

14. Թոքերու բաղցկեղ: Այն բանջարեղէնները, որոնք կանաչ գոյնի տերեւներ ունին, անհրաժեշտ է զանոնք օգտագործել հեռու մնալու համար քաղցկեղէն: Նաեւ նարինջը, շատ կարեւոր պտուղ մը կը համարուի քաղցկեղի դէմ պայքարողներուն համար:

13. Կուրծքի քաղցկեղ: Անոնք որոնք կը տառապին անկէ եւ կամ նախապէս հասած են այս վիճակին, պէտք ունին հացահատիկներու, ցորենի եւ նաեւ բանջարեղէններէն կաղամբի:

14. Թոքերու բաղցկեղ: Այն բանջարեղէնները, որոնք կանաչ գոյնի տերեւներ ունին, անհրաժեշտ է զանոնք օգտագործել հեռու մնալու համար քաղցկեղէն: Նաեւ նարինջը, շատ կարեւոր պտուղ մը կը համարուի քաղցկեղի դէմ պայքարողներուն համար:

**ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՏՈՒՐԵՍ ԶՕՅՐԱՊ ԼԻՊՍԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ**  
**JP MORGAN CHASE BANK, TRUSTEE**

Հանդիպով կը հաղորդեմք, թէ Տուրէս Զօհրապ Լիպման Հիմնադրամը նիւթապէս պիտի օժանդակէ որ հրատարակուի ընտրեալ

ա. վարդապետական աւարտանոցներ հայագիտական նիւթերու մասին,

բ. հայոց հիմն պատմութեան երկեր հայ պատմաբաններու,

գ. 19րդ դարու եւ աւելի վաղ շրջանի հայ գրականութեան երկեր:

Ներկայացուող աշխատասիրութիւնները կրնան ըլլալ կա՛մ հայերէն կա՛մ անգլերէն լեզուով: Եթէ գործ մը հայերէն լեզուով է, անոր պէտք է ընկերանայ անգլերէն որակաւոր թարգմանութիւնը:

Դիմումնագիրները ներկայացնել ամէն տարուան Ապրիլ 15 եւ Նոյեմբեր 15 թուականներէն առաջ:

Յաւելուածական տեղեկութեան եւ դիմումնագրի թերթիկ ստանալու համար դիմել՝

**LIEBMANN FUND - PUBLICATIONS**  
 c/o Mr. M. Haigentz  
 1518 11th Street  
 Fort Lee, NJ 07024

**ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Avenue  
 Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:  
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

**ՎԱՐՉՈՒ ՍՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
 1060 N. ALLEN AVE. PASADENA  
 ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

ՕՊԱՍԱ ՊԻՏԻ ՅԱՐԳԷ՞ ԻՐ ԽՈՍՏՈՒՄԸ ԹԵ՛ ՈՉ

Շարունակում է 1-ին

նոնացման բանակցութիւններու արուեստական գործընթացին յաջողութեան չի վնասելու մտահոգութիւններէ թելադրուած, նաեւ վստահելով թուրքադաւաճեցնելու դիւանագիտական խոստումներուն՝ (ըստ մեր հայեցողութեան կեղծ ու պատիւ) գոհր դարձաւ իր քաղաքական բարեմտութեան (հաւատա՞նք, Ա.Գ.): Օպաման այսօր, փաստօրէն ձախողութիւն արձանագրեց հայ թուրք հաշտութեան բանակցութիւններուն ստորագրուած համաձայնութիւններուն գործադրութեան մէջ: Թուրքիա, որպէս թէ իր հոգեդէր՝ Ատրպէյնանին դատը պաշտպանելու համար, նաեւ օգտուելով ԱՄՆի դիմագրաւած պատերազմական պայմաններէն, իր ստորագրած համաձայնագրի սահմաններէն դուրս գալով, անոր գործադրութիւնը պայմանաւորեց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման հետ: Ուստի, Օպամա չի կրցաւ յարգել հայոց տուած իր արժանապատիւ խոստումը, անկախ անկէ որ արտասանած ըլլար անգամ՝ կացութեանէն բան փոխուած պիտի չըլլար. եղածը բառախաղ համարելով: Ինչու՞ զարմանալ, երբ այսօր հայոց ճեղասպանութեան նախաձեռնող սուրբ հարցը դիւանագիտութեան բերնին մէջ մէկն միւսը զգաստութեան հրախորդ, մէկը միւսին սպանալի կարգաւորում միջոց կը ծառայէ: Տակաւին լոկ բառախաղ կարելի էր որակել՝ պարզ, «ճեղասպանութիւն» բառի գործածութիւն՝ ուր տակաւին անգոյ էին Անոթ նախաձեռնող կարեւորութիւնները ԱՄՆի պետական մարտադրակին վրայ: Հոն իրենց խօսքը ունէին ներկայացուցչական ժողովը, Ծերակոյտը, վերջապէս ինք՝ Նախագահ Պարաօպաման, որոնք իրենց երկրի պետական շահերէն մեկնելով, Տիկ. Հիլըրիի ըսածին պէս, բանաձեւը պիտի չանցնի անգամ օրակարգի:

Պարզ է մեզի համար, որ ճեղասպանութեան նախաձեռնող պարագան, ԱՄՆի համար միշտ գիտակցապէս հարցական պիտի մնայ, քանի որ կը դիմագրաւէ քաղաքական, պատերազմական պայմաններ ունի եւ փոխադրական հարցեր, ուր Թուրքիա պիտի ծառայէ որպէս կամուրջ:

Որովհետեւ Օպամա իր նախորդներուն նման պիտի չուզէր վշտացնել իր երկրի, այսպէս կոչուած ռազմագիտական դաշնակիցը՝ շրջանցեց հայոց Մեծ եղեռնին՝ իր լիարժէք բնորոշումը տուող «ճեղասպանութիւն» բառը, Ապրիլի 6-7, 2009 Պոլսոյ մէջ տեղի ունեցած «Քաղաքակրթութիւններու համամիութեան» համագումարին: Փոխարէնը՝ ան իր գորակցութիւնը յայտնեց Հայ-Թուրք սկսած երկկողմ բանակցութիւններուն: Հայաստան-Թուրքիա սահմանները բանալու եւ տարածաշրջանէն ներս խաղաղութիւն հաստատելու գործընթացներուն: «ճեղասպանութիւն» բառի շրջանցման մէջ Թուրքիա լաւ խաղացած էր իր դերը, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները բարելաւելու կոչուած բանակցութիւնները հրահրելուն մէջ:

Եթէ Օպամա փորձէր վերականգնել նախորդ տարուան օրինակով ներկայիս իր վիժումին սեմին հասած հայ-թուրք համաձայնութիւնները-որոնք ձախողութիւններ են, անհամարելի թուրք խոստումնադրուած այլ, անպարկեշտ դիւանագիտութեան պատճառաւ, ինչ պիտի ըլլայ մեր հայերու հակադրեցութիւնը: Կը մտածեմ, թէ մեր մէջ, ալ հասունցած պէտք է ըլլայ այն գիտակցութիւնը, թէ ԱՄՆ ի վիճակի չէ կողմնորոշուիլ հայոց եւ անոնցմով ամբողջ մարդկութեան դէմ Թուրքիոյ գործադրած ճեղասպանութեան շանաչման, Իստապարտման եւ Հատուցման հիմնահարցին մէջ: Ինչպէս միշտ, ներկայիս, դեռեւս երկար ժամանակ իր կեցուածքը պիտի մնայ իր պետական մակարդակի վարձագիծը: Բայց ժողովրդական ներկայացուցչական մակարդակի վրայ կը փոխուի պատկերը:

Թիւ 252 բանաձեւին որդեգրման դէմ Բուէարկողներուն մէջ չտեսայ ԱՄՆ-ի ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնախումբի բանաձեւին դէմ Բուէարկող 22 անդամներէն ոչ մէկը, որ ուրանար Թուրքիոյ իրագործած ճեղասպանութիւնը հայոց դէմ: Վստահեմ, որ այս վերաբերմունքը ուշ կամ կանուխ իր քաղաքացու պիտի ունենայ ԱՄՆ-ի Գոնկրեսէն եւ Ծերակոյտէն ներս: Հոս է մեր յաղթանակը, որ դուռ պիտի բանայ դէպի մեծ ճանաչում:

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿԵԱՆ

Շարունակում է 13-ին

Թորգոմ Պատրիարք, Հայ Եկեղեցու վարդապետութեան եւ նուիրապետութեան վրայ հիմնուելով, մանրամասնօրէն քննած է հարցերը, պահանջները գինով անոր ինքնութիւնն ու անկախութիւնը, շեշտելով որ բարեկարգութիւնը իր համապարփակ ծիրին մէջ «մեր նախնեաց բացած ճամբէն» պէտք է ընթանայ, ընտանի դարձնելով Հայ Եկեղեցին իր հօտին, «առանց երբեք ոչինչ եղծելով իր առաքելական, արեւելեան, ազգային եւ վաղնջական նկարագրէն», զգուշացնելով որ «արդիական թեթեւութիւններ» չեղծեն մեր հնաւանդ եւ վաւերական եկեղեցին:

Օրինակի համար, երբ «Զեկուցում»-ը կ'առաջարկէ «վերցնել լուր օրերի ժամասացութիւնները, ինչպէս եղել է քրիստոնէական եկեղեցու մէջ մինչեւ Գ դարու վերջերը», Թորգոմ Պատրիարք լիովին անհամաձայն գտնուելով կը հարցնէ թէ բարեկարգութիւն ըստա՞ծը պաշտամունքը Հայ Եկեղեցին «վերցնելու» է, թէ զայն իմաստալից եւ գործնական նկատումներով «կրճատելու» է: Պատրիարքը անոնց «վերացում»-ը ոչ պատշաճ եւ ոչ ալ արդար կը նկատէր՝ «Աստուծոյ տունը շաբթուան հինգ օրերուն վերածելով լուսութեան եւ ամաչութեան վայրի մը»: Վերաւերելով Հայ Եկեղեցու անունն ու վարկը:

Իսկ կուսակրօնութեան պարագային «Զեկուցում»-ը նկատի առած է զայն զգաստ եւ ընդունելի սահմանումներով, առանց դիմելու անոր վերացումին: Թորգոմ Պատրիարքի վերլուծմամբ ինքզինն էութիւնը մէկ կողմէն ազատութեան, եւ միւս կողմէն յօժարութեան զոյգ յանձնառութիւնները կը թելադրէ, երկրորդ պարագային աւելի ներամփոփ, խստակրօն եւ վանական դրութեան մը ներքեւ ծառայելով: Այսուհանդերձ, կ'ըսէ Թորգոմ Պատրիարք, լսելու ենք Առաքելին զոյգ յորդորները, թէ «Պարտ է եպիսկոպոսին լինել միոյ կնոջ այր», որ կը հաստատէ թէ հոգեւորականը կրնայ ընտանիք կազմել, եւ թէ «պատուական է ամուսնութիւն» յորդորը:

Այս երկուքէն կարելի չէ երբեք հետեցնել թէ կուսակրօնութիւնը աւելի նախնական էր եւ կենսական: Ընդհակառակը, ան յետոյ ներմուծուած կարգապահական դրութիւն մը եղաւ: Եթէ այդ դրութիւնը պահ մը անձնուրաց եւ սրբակենցաղ դրոշմ թողուց, միւս կողմէ սակայն պակաս չեղան բարոյական սայթաքումները որոնք շարժարացուցիչ կուսակրօնութեան գերիվեր դիրքը ամուսնացեալ քահանայութեան վրայ: Ըստ Թորգոմ Պատրիարքի նախընտրութիւնը Հայ Եկեղեցու պարագային այլեւս չի կայանար կուսակրօնութեան «առաւելութեան» վրայ, որովհետեւ ծառայութեան դաշտը աշխարհիկ հոգեւորականին ձեռքն է ու անոնք են իրական հովիւները:

Իր հեղինակաւոր խօսքը որպէս եզրակացութիւն «Զեկուցում»-ի հարցին Թորգոմ Պատրիարք ըսած է ու անվարան յայտարարած թէ «իրականութիւն է այլեւս որ հասած է ամուսնաւոր

հոգեւորականներուն առջեւ եկեղեցական յառաջացումի եւ վարչական ասպարէզի ընդլայնման ժամը. այդ կը պահանջէ ո'չ միայն դարու ոգին, այլ մանաւանդ ներքնապէս եկեղեցական ուժաւորման հարկը, ու ատոր չեն հակառակիր, կ'ըսէ, ո'չ կրօնքին հոգին եւ ո'չ մեր եկեղեցու նախկին եւ ներկայ իրաւաբանութիւնը»: «Զեկուցում»-ի մնացեալ բոլոր հարցերու մասին Պատրիարքը մանրամասնօրէն տուած է իր կարծիքը շինարար եւ գործնական ոգիով: Ձանտնք վերլուծման կարգով կարելի է գտնել մեր շարադրած «Ազգապատում»-ի Գ հատորի Բ Գիրքին մէջ, (Նիւ Եորք, 1997):

Թորգոմ Պատրիարքի Գործերը

Պատրիարքական պաշտօնի իր կարճատեւ տարիներուն (1931-1939), Թորգոմ Պատրիարք վանահայր, գերագանց ուսուցչի եւ վարչազէտի իր բեղմնաւոր գործերը ընծայեց Առաքելական Աթոռին: Իրմէ ձեռնադրուեցան 16 միաբան հոգեւորականներ՝ 1932-ին, 1934-ին, 1935-ին, 1936-ին, եւ 1937-ին: Պիտի ձեռնադրէր նաեւ վեց հոգեւորականներ եւս 1939-ին եթէ իր յանկարծական մահը վրայ չհասնէր, որ պատահեցաւ նոյն տարուոյ Փետրուարին: Թորգոմ Պատրիարք կրցաւ շնորհալի ճամբով եւ առանց պարտադրանքի հայրական ուղղութիւն տալ իր սաներուն, իր մաքուր եւ օրինակելի կենցաղով, մտքի բարձրութեամբ, պատկառանքով եւ գրչի ու քարոզի բիւրեղեայ փայլքով:

Ան եղաւ ՍԻՈՆ ամսագրի իսկական խմբագիրը ուր աննախընթաց արդիւնքով լոյս տեսան իր կրօնաշունչ գրութիւններն ու Հայ Եկեղեցու բարենորոգութեան վերաբերեալ համապարփակ վերլուծումները: Իր գործին միւս երեսը տնտեսական էր, նոյնքան կարեւոր, որուն շուտափոյթ բարուրումին դարձուց իր ուշքը եւ յաջողեցաւ կարճ ատենէն թեթեւցնել պարտքերը եւ հաստատութեան կալուածներու տէր դարձնել Ս. Յակոբեանց վանքը:



Իր ձեռնաստեղծները դարձան Հայ Եկեղեցու որակաւոր առաջնորդներն ու հովիւները, ուսեալ եւ նուիրեալ, հետեւելով իր օրինակին: Իր օրով 1934 թուին կատարուեցաւ Հայերէն Աստուածաշունչի Թարգմանութեան 1500-ամեակը՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան յատուկ կոնդակով գոր Պատրիարքը գործադրեց իմացական ու հեղինակաւոր իր անձովն ու անմիջական ծրագրումներով: Այդ առիթով խմբագրեց «Յուրաբան» անուն մեծադիր հատորը ուր համախմբեց Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ կատարուած բոլոր հանդիսութեանց նկարագրութիւնները: Հրատարակեց նաեւ 1932-ին իր մեծ ուսուցչին՝ «Եղիշէ Պատրիարք Դուրեան»-ի մասին բացառիկ հատորը որ կը մնայ հայ տարեգրութեան մէջ որպէս գոհար մը նուիրուած Արմաշի եւ Երուսաղէմի «հոգի»-ին՝ Դուրեան Պատրիարքի: Յետ մահու Տնօրէն ժողովի որոշմամբ հրատարակուեցան Թորգոմ Պատրիարք Գուշակեանի «Աւետարանի ձմբէն» եւ «Առաքելուց Շաւիղով» զոյգ քարոզարկերը:

**ՅԱԲԱԿՅԱԿԱՆ**  
ԳՐԻԳՈՐ ԳՈՒՋՈՒԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկին Կիւլենին, զաւակներուն եւ մասնաւորաբար՝ ՆՍՄՄ-ի վարչութեան անդամ Տէր եւ Տիկ. Սեդա եւ Վազգէն խոտանեանին ու համայն պարագաներուն:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O.1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104  
Norserount@sbcglobal.net

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԷԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

# ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ 10 ՀԱՍԱՐԱԿ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ



ԸՆԴԱՄԵՆԸ 10 ՊԱՐՁ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ՝  
ՄԵՆՔ և ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԸ ՁԵՌՔ ԿԲԵՐԵՆՔ.

- ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ
- ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
- ԱՎԵԼԻ ԼԱՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Մարտ ամսին մեզանից յուրաքանչյուրը թերթիկ կստանա: Այդ թերթիկը առնչվում է Միացյալ Նահանգների առաջիկա մարդահամարին: Մարդահամարին մասնակցելը չափազանց կարևոր է, քանի որ դրանից կախված կլինի մեր ապագան: Մարդահամարի թերթիկը Ձեր իրավական կարգավիճակի, կրոնի, ինչպես նաև անձնական կյանքին վերաբերող հարցեր չի պարունակում: 2010 թվականի մարդահամարին ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք 2010census.gov

ՈՒՐԵՄՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹԻԿԻ 10 ՀԱՄԱՐԱԿ  
ՀԱՐՑԵՐԻՆ, ՓՈՍՏՈՎ շԵՏ ՈՒՂԱՐԿԵԼՔ և ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ:

United States  
**Census  
2010**  
ԱՄՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ-2010  
ԱՅՆ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է: